

Մշակութային և Հասարակական
Երկշաբաթաբեր
Հոյն
1200 թուման
Հայաստանում 320 դրամ

**ԵՐՐՈՐԴ
ՀԱԶԱՐԱՄԵՆԱԿԻ
ԱՐԻԻՆԱԼԻ
ՍԿԻԶԲԸ**

**ՍԵՊՏԵՄԲԵՐ 11-Ի
ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ
10-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԸ**



ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 Մամուլը իրաւունք չէ իրապարակել թեմականի բիւջէի մանրամասները
- 3 Ազգային մարմինների անւանացանկը
- 4 Բիւջէի քննարկում
Արփիհնէ Սիմանեան
- 5 Դուք ինչպե՞ս, վարձուոր է՞ք ...
Ք. Յակոբեան
- 6 «Ազգ» օրաթերթի հարցազրոյցը Տէր Ներսէս Ներսէսեանի հետ
- 14 Հայաստանի գիւղատնտեսութեան նախարարի այցը Թեհրան
Լեւոն Ահարոնեան
- 17 Վիկիլիքսի նոր բացայայտումները
Հայաստանի մասին
Նայիրա Դայրումեան
- 18 Խօսքեր
Խորխէ Լուիս Բորխես
- 20 Հիտլերը՝ նկարիչ
- 21 Ստրադիվարիւս Զուլթակ՝ 16 միլիոն դոլար
- 22 Ճեղքող հոսանքներ
- 24 Մարզանք

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

Ե օրի, թիւ 106, Սեպտեմբեր 14, 2011,
1200 թուման
Հայաստանում 320 դրամ



Սեպտեմբերի 11-ի ահաբեկչութեան 10-րդ տարելիցը

- 8 Երրորդ հազարամեակի արիւնալի սկիզբը
Ժ. Մնացականեան
- 9 Ժամանակացոյց
- 11 2008-ի թիւը
- 12 Ֆորում
Կոլիա Տէր Յովհաննիսեան

Պ ա Ր Ա Կ Ե Ր Է Ն ք ա ժ ի ն

- | | | | |
|--|---|---|--|
| 2 Այս համարի հայերէն էջերում | 6 | Իրան-Հայաստան առեւտրական յարաբերութիւնների հեռանկարը | 12 |
| 4 Յուրիխի պրոտոկոլների բեկանումը
Թուրաջ Խոսրուի | | Շահռոյն Զահիրի
Լեւոն Ահարոնեան
Ալիռեզա Փիրուզան | |
| 5 Պարսից ծոցի անունը է. դարի հայերէն մի աղբիւրում | 9 | Թումանեանի գործերի | |
| Գարուն Սարգսեան | | | բացառիկ մի թարգմանութեան մասին
Մի թերթ վեց հազու համար
Ռոբերթ Սաֆարեան |

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտոնատէր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
---	---	--	---

ՄԱՍՈՒԼ ԻՐԱԿԱՍՈՒ ԶԷ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ ԹԵՄԱԿԱՆԻ ԲԻԶՆԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Սեպտեմբերի 6-ին եւ 7-ին, կայացան ԹՀԹ Պատգամաւորական ժողովի նիստերը, որոնց ընթացքում համայնքի ներկայացուցիչները քննարկեցին եւ հաստատեցին նորակազմ Թեմական խորհրդի յառաջիկայ երկու տարիների գործունէութեան սկզբունքները, ազգային մարմինների անդամակազմի ցանկերը եւ թեմի միամեայ բիւջէն:

Ստորեւ ներկայացնում են հատուածներ Թեմականի ներկայացրած փաստաթղթից եւ ազգային մարմինների անձնակազմի ցանկերը, որոնք ամբողջութեամբ հրատարակել են առաջնորդարանի կայքում, ինչպէս նաեւ տարեկան բիւջէի քննարկման համառօտ զեկոյցը:

Հարկ ենք համարում աւելացնել, որ յարգելով Պատգամաւորական ժողովի յարգելի դիւանի շեշտակի պահանջը այն մասին, որ մամուլը չանդրադառնայ բիւջէի մանրամասնութիւններին, հնարաւորութիւն չունենք հանգամանօրէն զեկուցել եւ քննարկել բիւջէի բովանդակութիւնը, թէեւ դրանց իմանալը համարում ենք համայնքի իրաւունքը եւ հաստատեցնում ենք, որ թեմի տարեկան բիւջէն եւս պիտի ամբողջութեամբ հրատարակուի առաջնորդարանի կայքում եւ տրամադրուի հանրութեան: Դա առաւել եւս անհրաժեշտ է, երբ Պատգամաւորականի անդամների եւ Թեմական խորհրդի նախագահի խօսքերում անընդհատ շեշտը դրոււմ է թափանցիկ գործելակերպի վրայ:

ԹԵՄԱԿԱՆ ԶԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԿԱՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆԵՆԵՐ ԵՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ (ՀԱՏԻԱՍԵՆԵՐ)

ԿՐԹԱԿԱՆ

Շարունակելու են դպրոցների վերադասաւորման ծրագիրը որի արդիւնքում հնարաւոր կը լինի աւելի դիւրութեամբ իրագործել կրթական մակարդակի բարելաւման համար նախատեսուած ծրագրերը եւ խնայողութիւն անել ծախսերի մէջ առանց վնասելու կրթական մակարդակին:

Մշակելու են ծրագրեր հայոց ազգային դպրոցները իքնաբաւ դարձնելու, ընդ որի աշակերտութեան կրթաթոշակները որոշակի աւելացում են կրելու, ուսուցչութեան թիւը համապատասխանեցնելու է դպրոցների աշակերտութեան թւի հետ:

Մանկապարտէզ-նախակրթարանները շարունակելու են իրենց աշխատանքները նիւթապէս իքնաբաւ դառնալու ծրագրաւորումներով:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ

Ազգային կալուածներում (Դպրոց - եկեղեցի- Ազգային Հաստատութիւն) հիմնական վերանորոգման եւ շինարարական աշխատանքներ չձեռնարկել, կատարել միայն բացարձակ անհրաժեշտութեան եւ անյետաձգելիութեան դէպքում: Ազգային Հաստատութիւնների եւ կենտրոնների շէնքերի շինարար-

ական աշխատանքները կատարելու են Շինարարական Սարմինի միջոցով եւ վերահսկողութեամբ: Շինարարական աշխատանքները կատարելու են Թեմական խորհրդի հաստատումն ունենալուց յետոյ:

Շինարարական աշխատանքների նախահաշիւը հաստատելու է Թեմական խորհրդի միջոցով: Նախահաշիւային փոփոխութիւնների մասին պէտք է նախօրօք տեղեակ պահել Թեմական խորհրդին եւ հաստատումն ստանալ: Հարկ եղած դէպքում յաւելեալ նախահաշիւի հաստատումն ստանալ: Հակառակ դէպքում առաւելագոյնը նախահաշիւի գումարից 10 տոկոս յաւելումով հաշիւեցոյցներն են վաւերական համարելու:

Թունեան դպրոցի եւ Սասուն Մանկապարտէզի վերակառուցման աշխատանքները եւ կահաւորումը պէտք է աւարտուեն նախքան 2011-2012 ուսումնական տարեշրջանի բացումը:

Նախատեսոււմ է բոլոր շինարարական մեծ աշխատանքները կատարել նւազուրդի սկզբունքով, համապատասխան շինարար-կապալառուի միջոցով: Աշխատանքներին կը վերահսկի Շինարարական Սարմինը, իւրաքանչիւր շի-

նարարական աշխատանքի համար կազմուած Գործադիր Յանձնախմբի միջոցով:

ԿԱԼՈՒՍԵՆԵՐ

Աշխատել ազգապատկան կալուածները հնարաւորինս չը վաճառել, հակառակ դէպքում Կալուածի վաճառքից գոյացած գումարը յատկացնել մի այլ կալուածի գնման համար:

Նորոգել ազգապատկան պարպուած շէնքերը օրւայ արժէքով վարձու տալու համար:

Վերանայել վարձու տրուած ազգապատկան բոլոր շէնքերի վարձերը միշտ դրանք համապատասխանեցնելով օրւայ արժէքներին:

ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻՆ ՕՃԱՆԳԱԿՈՂ ՄԱՐՄԻՆ

Շարունակել բնակարան վարձելու համար կանխավճարների յատկացումները կարիքաւոր ընտանիքներին:

Շարունակել կարիքաւոր ընտանիքների բժշկական ապահովագրութիւնը:

Շարունակել կարիքաւոր ընտանիքներին յատկացուող նպաստները:

ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դատական խորհուրդը պետական դատարանների եւ դատական ուժի պատասխանատու մարմիններ-

ՄԱՍՈՒԼ ԻՐԱԿԱՍՈՒ ԶԷ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ ԹԵՄԱԿԱՆԻ ԲԻԶՆԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Սեպտեմբերի 6-ին եւ 7-ին, կայացան ԹՀԹ Պատգամաւորական ժողովի նիստերը, որոնց ընթացքում համայնքի ներկայացուցիչները քննարկեցին եւ հաստատեցին նորակազմ Թեմական խորհրդի յառաջիկայ երկու տարիների գործունէութեան սկզբունքները, ազգային մարմինների անդամակազմի ցանկերը եւ թեմի միամեայ բիւջէն:

Ստորեւ ներկայացնում են հատաձեւեր Թեմականի ներկայացրած փաստաթղթից եւ ազգային մարմինների անձնակազմի ցանկերը, որոնք ամբողջութեամբ հրատարակել են առաջնորդարանի կայքում, ինչպէս նաեւ տարեկան բիւջէի քննարկման համառօտ զեկոյցը:

Հարկ ենք համարում աւելացնել, որ յարգելով Պատգամաւորական ժողովի յարգելի դիւանի շեշտակի պահանջը այն մասին, որ մամուլը չանդրադառնայ բիւջէի մանրամասնութիւններին, հնարաւորութիւն չունենք հանգամանօրէն զեկուցել եւ քննարկել բիւջէի բովանդակութիւնը, թէեւ դրանց իմանալը համարում ենք համայնքի իրաւունքը եւ հաստատեցնում ենք, որ թեմի տարեկան բիւջէն եւս պիտի ամբողջութեամբ հրատարակուի առաջնորդարանի կայքում եւ տրամադրուի հանրութեան: Դա առաւել եւս անհրաժեշտ է, երբ Պատգամաւորականի անդամների եւ Թեմական խորհրդի նախագահի խօսքերում անընդհատ շեշտը դրւում է թափանցիկ գործելակերպի վրայ:

ԹԵՄԱԿԱՆ ԶԱՅՈՑ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԿԱՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆԵՆԵՐ ԵՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ (ՀԱՏԻԱՍԵՆԵՐ)

ԿՐԹԱԿԱՆ

Շարունակելու են դպրոցների վերադասաւորման ծրագիրը որի արդիւնքում հնարաւոր կը լինի աւելի դիւրութեամբ իրագործել կրթական մակարդակի բարելաւման համար նախատեսուած ծրագրերը եւ խնայողութիւն անել ծախսերի մէջ առանց վնասելու կրթական մակարդակին:

Մշակելու են ծրագրեր հայոց ազգային դպրոցները իքնաբաւ դարձնելու, ընդ որի աշակերտութեան կրթաթոշակները որոշակի աւելացում են կրելու, ուսուցչութեան թիւը համապատասխանեցնելու է դպրոցների աշակերտութեան թւի հետ:

Մանկապարտէզ-նախակրթարանները շարունակելու են իրենց աշխատանքները նիւթապէս իքնաբաւ դառնալու ծրագրաւորումներով:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ

Ազգային կալւածներում (Դպրոց - եկեղեցի- Ազգային Հաստատութիւն) հիմնական վերանորոգման եւ շինարարական աշխատանքներ չձեռնարկել, կատարել միայն բացարձակ անհրաժեշտութեան եւ անյետաձգելիութեան դէպքում: Ազգային Հաստատութիւնների եւ կենտրոնների շէնքերի շինարար-

ական աշխատանքները կատարելու են Շինարարական Սարմինի միջոցով եւ վերահսկողութեամբ: Շինարարական աշխատանքները կատարելու են Թեմական խորհրդի հաստատումն ունենալուց յետոյ:

Շինարարական աշխատանքների նախահաշիւը հաստատելու է Թեմական խորհրդի միջոցով: Նախահաշիւային փոփոխութիւնների մասին պէտք է նախօրօք տեղեակ պահել Թեմական խորհրդին եւ հաստատումն ստանալ: Հարկ եղած դէպքում յաւելեալ նախահաշիւի հաստատումն ստանալ: Հակառակ դէպքում առաւելագոյնը նախահաշիւի գումարից 10 տոկոս յաւելումով հաշիւեցոյցներն են վաւերական համարելու:

Թունեան դպրոցի եւ Սասուն Մանկապարտէզի վերակառուցման աշխատանքները եւ կահաւորումը պէտք է աւարտուեն նախքան 2011-2012 ուսումնական տարեշրջանի բացումը:

Նախատեսուում է բոլոր շինարարական մեծ աշխատանքները կատարել նւազուրդի սկզբունքով, համապատասխան շինարար-կապալառուի միջոցով: Աշխատանքներին կը վերահսկի Շինարարական Սարմինը, իւրաքանչիւր շի-

նարարական աշխատանքի համար կազմուած Գործադիր Յանձնախմբի միջոցով:

ԿԱԼՎԱՍԵՆԵՐ

Աշխատել ազգապատկան կալւածները հնարաւորինս չը վաճառել, հակառակ դէպքում Կալւածի վաճառքից գոյացած գումարը յատկացնել մի այլ կալւածի գնման համար:

Նորոգել ազգապատկան պարպուած շէնքերը օրւայ արժէքով վարձու տալու համար:

Վերանայել վարձու տրուած ազգապատկան բոլոր շէնքերի վարձերը միշտ դրանք համապատասխանեցնելով օրւայ արժէքներին:

ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻՆ ՕՃԱՆԳԱԿՈՂ ՄԱՐՄԻՆ

Շարունակել բնակարան վարձելու համար կանխավճարների յատկացումները կարիքաւոր ընտանիքներին:

Շարունակել կարիքաւոր ընտանիքների բժշկական ապահովագրութիւնը:

Շարունակել կարիքաւոր ընտանիքներին յատկացուող նպաստները:

ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դատական խորհուրդը պետական դատարանների եւ դատական ուժի պատասխանատու մարմիններ-

ՊԱՏՊԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՆԻՍՏՈՒՄ ՀԱՍՏԱՏԻԱԾ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆԻԱՆԱՅԱՆԿ

ՄԱՅԻՍ 2011 ԱՌ ՄԱՅԻՍ 2013

րի մօտ հետապնդելու է Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անդամների պարագային մեր եկեղեցու Անձնական Իրաւունքների Կանոնների ճշգրիտ գործադրութեան հարցը:

Աշխատանք պիտի տարւի օրինականացնել Իրանահայութեան անձնական իրաւունքների Կանոնագիրքը:

Հոգեբանական եւ ընկերային հասարակական հարցերով խորհրդակցական ծառայութիւն մատուցել այդ ծառայութեան կարիքն ունեցող համայնքիս անդամներին, իրանահայ հոգեբաններից եւ հոգեբանական թեքումով մասնագիտացած անձանց համագործակցութեամբ:

ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ

Ղազխնի Ուսանողական կացարանի աշխատանքը շարունակելու է, աշխատելով կենցաղային բարւոյք պայմաններ առաջացնել կացարանից օգտուող ուսանողների համար:

ՄԱՆԿՈՒԹԱՅԻՆ-ՄԱՐՉԱԿԱՆ

Շարունակել համալսարանի ուսանողներին յատկացող կրթաթոշակի նպաստը:

Ոչ հայ իրանցիներին հայ ժողովրդի պատմութիւնն ու մշակոյթը ծանօթացնելու կարելորութիւնը նկատի ունենալով, կը շարունակւի պարսկերէն լեզուով տպուող «Պայման» պարբերաթերթի հրատարակման նիւթական օժանդակութիւնները:

Թ. Յ. Թ. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՖՈՆԴ (ԵՂԻՎ ԲԱԲՈՒՄԵԱՆ) Պրն. Հենրի Ջուակիմ Պրն. Սողոմոն Բարսեղեան Պրն. Տիգրան Պօղոսեան Պրն. Սեթօ Գոջամանեան Տկն. Արմինէ Առաքելեան

Թ. Յ. Թ. ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՖՈՆԴ (ՇԱՀՎԵՐԴԵԱՆ, ՊԱՆԻՐԵԱՆ) Պրն. Արամայիս Ներսիսեան Տկն. Ժակլին Ջուակիմ Տկն. Քարենլա Յարութիւնեան Պրն. Ռազմիկ Խողաբախշեան Տկն. Ռիմա Մանասերեան Օր. Արիմէ Դանիէլեան

ԾԽԱԿԱՆ ՏՈՒՐԹԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Տկն. Ժուլիետ Գասպարեան Պրն. Նորայր Փանոսեան Տկն. Արմիկ Դանիէլեան Տկն. Վիրջինիա Էլիագեան

ԿԱԼԻՄՉԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ Պրն. Աշոտ Քարամեան Պրն. Վահէ Թարոյեան Պրն. Յարութ Աբնուսեան Պրն. Վահիկ Շահնազարեան Պրն. Աշոտ Պօղոսեան

Ա. ԱԲԵՏԻՍԵԱՆ ԲՈՒԺԱՐԱՆ Պրն. Եփրեմ Անտոնեան Տկն. Արմինէ Մովսիսեան

Տկն. Լորետա Բանդարի Տկն. դոկտ. Ալիս Խաչեան Պրն. Ժորժիկ Հայրապետեան Պրն. Ռոբերտ Ռէյհանեան Օր. Կարին Այւազեան Մասիհի

ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Տկն. Իռէն Աբնուսեան Տկն. Անժէլ Մեսրոպեան Պրն. Սաքօ Ազիզեան Տկն. Ռիմա Աւետեան Պրն. Նարեկ Գալստեան Պրն. Սարօ Աւագեան Պրն. Վազգէն Նիկոլայեան Պրն. Էլւարդ Բաբեան Պրն. Յովիկ Գիւլազիզեան Տկն. Թալին Բաղումեան Տկն. Լորետա Դանիէլեան

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ Օր. Կարինէ Դաւթեան Պրն. Շահէն Յարութիւնեան Պրն. Արթին Բաբայեան Օր. Անի Միրզախանեան Օր. Ռենիա Շահվերդեան Պրն. Խաչիկ Բաբայեան Տ. Գրիգորիս քինյ. Քեշիշեան Պրն. Քրիստոֆեր Ամիրեան Օր. Անոմէ Մեհրաբեան ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ Պրն. Մանաւազ Սէթարտ Պրն. Ալէն Տկն. Սեւանայ Մեհիփանեան

Օր. Սիւնէ Շահվալադեան Պրն. Գեորգ Ռահ

ԴՈՒԼԱԲ-ԲՈՒՐԱՍՏԱՆ ԳԵՐԵՉԱՆԱՍԱՆ ՄԱՐՄԻՆ Պրն. Նիկոլ Բաղումեան Պրն. Ժորժ Մեհրաբեան Պրն. Արտուշ Պօղոսեան

ԿԱՐԻՔԱԿՈՐՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՄԱՐՄԻՆ Տկն. Քարմէն Ղահրամանեան Պրն. Շահէն Բանդարի Տկն. Իւետ Քեշիշեան Տկն. Լորետա Սարգսեան Պրն. Սեպուհ Ջամանի Տկն. Իւետ Մանուկի Մասիհի Պրն. Երւանդ Ջոհրաբի Մասիհի Տկն. Քաթրինա Մուրադխանեան Պրն. Ռուբիկ Տէր-Յովհաննիսեան Պրն. Նորիկ Աբրահամեան Տկն. Ովսաննա Նազարեան

Անորոշ է միայն դատական մարմնի անդամակազմը: Աղբիւր՝ ԹՀԹ Առաջնորդարանի կայք



ՊԱՏՎԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 7-Ի ՆԻՍՏ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԻԶՆԵՅԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Արփինէ Սիմանեան



Թւականիս 7 Սեպտ. 2011 թւականին, Հայոց Ազգ. Առաջնորդարանում, նախագահութեամբ Թ.Յ.Թ առաջնորդ Տ. Սեպուհ Արք.Սարգսեանի, կայացաւ 14-րդ Պատգամաւորական ժողովի 29-րդ նիստը:

Տէրունական աղօթքով բացւած ժողովին, որը շարունակութիւնն էր նախորդ օրւայ նիստի, ներկայ էին 31 պատգամաւորներ, դիւանը, Թեմական խորհուրդը եւ հաշիւեքննիչ մարմինը:

Նկատի էր առնուած քննարկել 3 օրակարգ՝

1. Իրանական 1390 թ. նախահաշիւը՝ հանգամանօրէն ներկայացնելով մուտքը, ելքը, բացը եւ յաւելումը:
2. Նոր սրահի կառոյցը Ձէթուն թաղամասում, Սուքերեան սրահին կից:
3. «Թունեան» դպրոցի վերակառուցումը, ծախսերը եւ հաշիւները:

ՆԱԽԱՀԱՇՎԻ ԲԱՏ

Նախահաշուում, որը շատ մանրամասնութեամբ ու բժախնդրութեամբ պատրաստել էր թեմական խորհուրդը, նկատի առնուած մօտ 2.5 միլարդ թուման մուտքի դիմաց, արձանագրուել էր 4 միլիարդ թումանի ելք, որը մտահոգութեան տեղիք տուեց եւ հարց ու պատասխանի քաշուեց:

Նախահաշուում ներառած էր՝ Ծխական տուրքը, եկեղեցիների մուտքն ու ելքը, կրթական բաժնին պատկանող, դպրոցների, մանկապարտէզների եւ ուսուցիչների ռոճիկները եւ նրանց հատուցումը, համահայկական խաղերի ծախսերը, բուժարան, բուրաստան, դիակառք, պայման եռամսեակի տպագրութեան ծախսը, Արտակ Մանուկեան թանգարան, Հ.Հ դեսպանատան շէնքը, կարիքաւոր ընտանիքների եւ օժանդակելու ֆոնդը եւ այլ կալւածքները... , պատգամաւորների կողմից հնչեցին հարցումներ եւ տրուեց

չափին ու բաւարար պատասխաններ Թեմական խորհրդի կողմից:

Նախահաշւի քւէարկման արդիւնքն էր՝ 32 կողմ, 1 դէմ եւ 1 ձեռնպահ:

200 ՄԻԼԻՈՆ ԹՈՒՄԱՆ ՆԱՅԻՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՇԷՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՍԱՐ

Ժողովի 2-րդ բաժինը սկսեց «Նայիրի» միութեան նոր կենտրոնատեղիի կառուցման հարցի քննարկումով: Նախատեսուած էր 200/000/000 թուման Թեմական խորհուրդը օժանդակելով «Նայիրի» միութեան համար կառուցել մի սրահ՝ «Սուքերեան» սրահի կողքին, որպէսզի Ձէթուն քաղաքամասի 4 քոյր միութիւնները միատեղ ու հերթաբար օգտուեն սոյն սրահից, եւ ապագայում եթէ արհեստաւորների միութիւնը եւս ցանկանայ միանայ նրանց, շէնքի վրայ կաւելանայ 2 յարկաբաժիններ եւս (Ի.Ա.Ս.Ս., «Նայիրի»),

«Անահիտ» եւ «Աշխարհատեսներին» միութիւններն էին այս հարցի մէջ):

Օրակարգը հաստատուեց 27 կողմ, եւ 4 ձեռնպահ քւէներով:

ԹՈՒՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՎՈՒՄՆԵՐԻ ՍԱՆ ԾԱՆՍԵՐՈՒՄ ԱՆՈՐԱՇՈՒԹԻՒՆ

Երրորդ օրակարգը «Թուներան» դպրոցի վերանորոգման ծախսերի շուրջ էր:

«Թուներան» դպրոցի քանդելու եւ ապա շինութեան համար սկզբուն մախատեսուել էր 70 միլիոն թուման բիւջէ, սակայն թեմական խորհրդի հաշուեքննիչ մարմնի անդամ Պրն. Էսիկ Տէր Ստեփանեանի միջոցոց ներկայացուած գեկոյցի համաձայն, սկզբնական փուլուն ծախսերը մախատեսուածից 203 տոկոսով յաւելուն է արծանագրել:

(Իհարկէ հաշիւները 2 տարի ուշացունով են յանձնուել թեմական խորհրդի հաշուապահին):

Ստեղծուած բացի համար շատ հարց ու պատասխաններ եղան: Այս հարցի շուրջ Պրն. Էսիկը յայտնեց, որ նա միայն կարող է ըստ առկայ փաստաթղթերի կարծիք յայտնել եւ հաշիւներ կազմել, այն ինչ եղած փաստաթղթերը շատ թերի են եղել:

Պատգամաւորները փնտրուն էին տրամաբանական պատասխաններ, կարծիք կար, գուցէ եղած ծախսերը անհրաժեշտ են եղել, այդ դէպքուն ո՞ր են փաստերը: Առաջարկ եղաւ՝

1-Յանձնախումբ կեանք կոչի, որ խնդիրները հսկի:

2-Գունարը յանձնել դիւանի մարմնին եւ ինքը տնօրինի հարցը:

Ի վերջոյ որոշեց ժամանակի թեմական խորհուրդը եւ դպրոցի շինարարական մարմինը ներկայանան ժողովին եւ գործը քննարկեն ու առկայ հարցերին պատասխանեն: Այս հարց քննարկունը կը շարունակի յաջորդ նիստերուն:

ԴՈՒՔ ԻՆՉՊԵՆ, ՎԱՐՁՈՐ ԷՔ...

Ք. Յակոբեան

Շատ են մտածել այս մասին, բայց երբեք չեն կարողացել գոնէ ինձ համար լուծուն կամ մի յարմար պատասխան գտնել:

Միգուցէ ձեզ համար էլ նոյն հարցն առաջացած լինի, որ, եթէ դուք սեփական բնակարան չունէք, ու մի խօսքով վարձուր էք, ի՞նչ պիտի անէք այս դժար ու ծանր դրութեան մէջ:

Յստակ կարող են ասել թէ բոլոր նրան ք, ովքեր վարձուր են ու չունեն սեփական բնակարան, այս վիճակին շատ լաւ ծանօթ են ու գիտեն բոլոր դժարութիւնները: Յատկապէս հայ ընտանիքների համար, վարձակալման համար յարմար տուն գտնելը մի մեծ մղձաւանջ է, որին ոչ մի խելամիտ լուծուն չկայ:

Նրանցից քանիսի հետ զրուցելիս, կարելի է իմանալ թէ ինչ պայմանների ու դրութեան մէջ են, երբ յարմար պայմաններով ու գնով բնակարան են փնտրուն:

Այս հարցին Տկն. Դ.-ն այսպէս է պատասխանուն:

-Արդէն մօտ քսան տարւայ անուսացած են եւ ունեն երկու զավակ: Ստիպուած են բնակարանս դատարկել ու մի ուրիշը գտնել, բայց դժբախտաբար այս պահին բոլորովին հեշտ չէ, որովհետեւ միւթական խնդիրներից անցած, ես երեխաներիս պատճառով որեւէ ուրիշ թաղամաս չեմ կարող բնակել՝ դպրոցի, միութեան, եկեղեցի եւ այլ հայկական կենտրոնների բերունով: Դրա համար ստիպուած են շատ ծանր վարձ վճարելով մնալ հայկական թաղամասուն:

Տկն.Ա.-ն, ընկերուիւ խօսքն հաստատելով, ւաւելացուն է.

-Ամէն մի տեղափոխութեան պատճառով, որոշ տնային ապրանքներ ձեռքից տալիս ու ստիպուած նորն ենք գնուն, իսկ այս խնդիրը տարիների ընթացքուն անընդհատ կրկնուն է: Դրա կողքին տան վարձերի

չափից դուրս բարձրանալն է: Ամէն տարի վարձի հետ նաեւ բարձրանուն է տան աւանդի գունարը, չգիտեն թէ այս ինչ օրէնք է եւ որտեղից է ծագել, բայց արդեօք մէկ բանուր կամ աշխատող, տարին ո՞րքան է վաստակուն, որ թէ տան մախավճարի վրայ բաւարարի եւ թէ վարձի: Վերջապէս ամէն մի ընտանիք տարւայ ընթացքուն ունի ուրիշ ծախսեր: Մի 60-65 տարեկան կին, այսպէս է գրոյցը շարունակուն:

-Ես մի հանգստի կոչուած կին են եւ մի չնչին թոշակ են ստանուն, երեխաներս անուսացած են եւ իրենց կեանքով, ես այս թոշակով պէտք է վճարեն թէ տան վարձի, թէ ուտել-խմելուս եւ թէ բուժմանս կապուած ծախսերի համար: Թէկուզ երեխաներս օգնուն են, բայց գիտեն, որ նրանց համար էլ դժար է: Թոշակիս համարեա մեծ գունարն յատկացուն են տան վարձին:

Տան հարցը, համարեա մեծ խնդիր է հայ ընտանիքների համար, ու դրանով հանդերձ որ, հայերը մեծ մասամբ գաղթել են դէպի Ամերիկա կամ այլ երկրներ, ու դրա հետ միաժամանակ անընդհատ բարձրարկ շէնքեր են կառուցել, էլի տան հարցը չի լուծուն: Ովքեր բնակարան են ունեցել եւ վարձով են տւել ու գնացել, նրանք էլ իրենց Ֆինասական դժարութիւնների պատճառով, ստիպուած ճնշուն են վարձուրներից, որ ւաւելին վճարեն, իսկ նորաշէների գները, բոլորիս յայտնի է, թէ երկրի տնտեսական ճգնաժամի եւ սղաճի պատճառով ինչքան բարձր են:

Ամէն մի տեղափոխութիւն ունի իր չարչարանքն ու դժարութիւնը. ամէն մի տեղափոխութիւն պատճառով վնասուն ենք թէ հոգեպէս եւ թէ Ֆինանսապէս: Գիտնականներն ասուն են, թէ ամէն մի տեղափոխութեան հարուածը հաւասար է մի հրդեհի, որը փչացուն ու ոչնչացուն է ունեցուածքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱՏՆԵՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՅԸ ԹԵՂԻՆ

Լեւոն Ահարոնեան



Տեղեակ էի, որ շաբաթ առաւօտեան 33 գիւղատնտեսութեան նախարար պրն. Սերգէյ Կարապետեանը, Իրանի «Ջահադէ Քեշաւարզի»-ի (Գիւղատնտեսութեան նախարարութեան) հրաւերով այցելելու էր Իրան: Ժամանելուց առաջ 33 դեսպանատան եւ Իրանի հիւր-ընկալ նախարարութեան կողմից արդէն նախատեսել էր պրն. Սերգէյ Կարապետեանի այցելութեան եւ հանդիպումների ծրագիրը: Պրն. Կարապետեանի նախատեսուած մէկ շաբաթեայ այցելութեան ծրագիրը, նրա զբաղւածութեան պատճառով կատարւելու էր աւելի սեղմ ժամանակահատուածում: Շաբաթ առաւօտ, Սեպտ. 3-ին, ըստ ծրագրի, նախարարը հասաւ Թեհրանի «Էմամ Խոմէյնի» օդակայանը, որտեղ

պաշտօնական ընդունելութիւնը կատարեց նախարարի տեղակալի միջոցով: Առաւօտեան ժամը 10:00-ին պատւիրակութիւնն ուղեւորեց դէպի Քարաջ՝ Գիւղատնտեսական Բիւրօական կենտրոն, ապա ժամը 15:30-ին հանդիպում ունեցաւ Իրանի գիւղատնտեսութեան նախարար դոկտ. Սադեղ Խալիլեանի հետ:

Երեկոյեան պատւիրակութիւնը ընթրիքի էր հրաւիրւած Իրանի գիւղատնտեսութեան նախարարի մօտ, որի հրաւիրեալների շարքում էի նաեւ ես՝ տողերիս հեղինակը: Երկու նախարարների եւ Իրանի նախարարութեան բարձրագոյն պաշտօնեաների ներկայութեամբ ստեղծուած մտերմիկ մթնոլորտում, խօսակցութիւնն ընթացաւ երկու նախարար-

ների միջեւ եւ նախարար Կարապետեանն իր շնորհակալութիւնն յայտնեց պրն. նախարար Խալիլեանին այս հրաւերի համար: Այս գրոյցի ընթացքում ես էլ իմ հերթին արտայայտեցի, նշելով, որ 12 տարի՝ 1956-ից 1968-ը, ծառայել եմ Իրանի գիւղատնտեսութեան նախարարութեան մէջ: Ասածս զարմացրեց պրն. նախարարին եւ նրա տեղակալին: Նախարարի տեղակալը՝ դոկտ. Փուր Յեմմաթն ասաց, թէ դա եղել է իր ծննդից առաջ: Իսկ նախարարն էլ նշեց, թէ ինքն այդ թւականներին դեռ երեխայ է եղել:

Ընթրիքն աւարտելով, մի քանի րոպէ եւս զրուցելուց յետոյ, Իրանի գիւղատնտեսութեան նախարարն իր զործակիցների հետ թողեց նախարարութեան պատկան

հիւրանոցը, որը գտնուում էր Վե-
լենջաքում, իսկ պրն. Կարապե-
տեանն ու իր պաշտօնեայ պրն.
Անդրանիկ Պետրոսեանը, եւ նա-
խարարութեան արտաքին կապե-
րի վարիչը մնացին հիւրանոցում:
Ըստ ծրագրի միւս օրը նախարար
Կարապետեանը եւ դեսպան Գ.
Առաքելեանը, ես եւ պրն.Ռեգա
Յէյրարին պիտի ժամանէինք Ղոմ,
որպէսզի այցելէինք այնտեղի
«Ֆադաք» ձիթապտղի հսկայա-
կան այգին: Այդ այցելութիւնն իմ
առաջարկով ու պնդումով կա-
տարւեց հետեւեալ պատճառով.

Տարիներ առաջ ես որոշել էի
ձիթապտղի 20 հազար տնկի նւի-
րել Հայաստանին. այդ օրերին
պրն. Յենրիկ Քուչինեանը Լոռու
մարզի նահանգապետն էր: Նա իմ
առաջարկները ընդառաջեց եւ Լո-
ռու մարզի այգետէրներին հետ մի
հանդիպում նշանակեց: Մեծ ըն-
դառաջում գտած այդ առաջարկը
դժբախտաբար չիրականացաւ
պրն. Քուչինեանի հանգամանքից
հեռանալու պատճառով: Բայց ես
յիշելով իմ խոստումը, տարիներ
շարունակ մտապահել էի, սպասե-
լով յարմար առիթի՝ այն իրակա-
նացնելու համար: Դա մեծ եկա-
մուտ է խոստանում գիւղացիու-
թեանը: 2008 թւականին Իրանի
Առեւտրի ու Արդիւնաբերութեան
պալատի կողմից, որն ընդգրկում
էր «Շորայէ Ալիէ Ձէթուն»-ը, ես,
պրն. Շահրոխ Չահիրին եւ պրն.
Ալ Էսհադը՝ Իրանի նախկին
առեւտրի նախարարը, հրաւիրե-
ցինք Ղոմի «Ֆադաք» այգին:
«Ֆադաք»-ը այն պարտէզի
ամուսն է, որը մուսուլմանների
Մուհամմեդ մարգարէն նւիրել էր
իր դստեր՝ Ֆաթեմէ Չահրային: Այ-
գին այցելելուց յետոյ ուղղակի
ապշած էի մնացել: Նրա տէրը՝
պրն. Բուլանդ Նազարը համարեա
յիսուն տարեկան մի մարդ էր, որ
ժամանակին պետութիւնից 120
հեկտար՝ այսինքն 1. 200. 000 ք.մ.
տարածք էր վերցրել եւ այն մշա-
կել ամբողջութեամբ: Քարոստ

անապատը մաքրել էր քարերից
եւ հեռաւոր շրջաններից հող էր
բերել՝ անշարժ քարերը ծածկելու
համար, որից յետոյ այդ աղաշատ
հողի մէջ ձիթապտղի տնկիներ էր
տնկել: Պէտք է ասել, որ այդ հս-
կայական տարածքը անմշակ նոյ-
նիսկ մի փոքրիկ մաս էլ չունէր:
Սրանից 4 տարի առաջ խիստ ցր-
տի պատճառով ծառերի մեծ մա-
սը չորացան, սակայն նա իր կամ-
քի ուժով նորից սկսեց մշակել այ-
գին: Մեր կիրակի՝ ամսի 4-ի այցը
Կարապետեանին ուղղակի զար-
մացրել էր. նա հիացել էր կատար-
ւած այդ հսկայական աշխատան-
քով, որը սկսուում էր տնկիների եւ
հողերի ուսումնասիրութիւնից
մինչեւ պտղի քաղելը, նրա պա-
հեստաւորումը եւ շուկային յանձ-
նելը: Այդ բոլորը գալիս էր մի մար-
դու, նրա երկու դստեր ու մի որդու
անդադար աշխատանքից: Դա
տքնաջան աշխատանքի, ուժի եւ
խելքի համատեղութեան այգին
էր:

Նախարար Կարապետեանը
շատ տպաւորւեց այդ այգու կազ-
մակերպութիւնից, եւ ցանկութիւն
յայտնեց՝ ՀՀ գիւղատնտեսութե-
ան նախարարութեան եւ «Ֆա-
դաք» հաստատութեան կամ Իրա-
նի «Շորայէ Ալի Ձէթուն»-ի միջեւ
համագործակցութիւն ստեղծելու
ուղղութեամբ: Ադ խօսքերը պրն.
Նախարարից լսելով, իմ ուրախու-
թեանը չափ չկար: Ես նամակնե-
րով եւ թէ անձամբ այցելելով պրն.
Նախարարին միշտ յուշում էի
յատկապէս Հայաստանի տաք
վայրերում ձիթապտղի տնկիների
մշակման կարեւորութեան մասին
եւ խրախուսում Իրանից տրակ-
տորներ գնելու: Իհարկէ այս մի
այցելութեամբ բոլոր հարցերը չէ-
ին կարգաւորուելու: Այնուամենայ-
նիւ, Իրան-Հայաստան Առեւտրի
պալատը այդ հարցին ամենայն
լրջութեամբ հետեւելու է, որպէսզի
այս գործն իր արժանի աւարտին
հասնի: Պիտի խոստովանեմ, որ
պրն. Բուլանդ Նազարը շատ յար-

գանքով ու պատուով ընդունեց մեր
խմբի անդամներին պրն. Նախա-
րար Կարապետեանին եւ Իրա-
նում ՀՀ դեսպան պրն. Գ. Առաքե-
լեանին եւ արտգործ նախարա-
րութեան պաշտօնեաներին: Նրան
դուր էին եկել նախարարի տեղե-
կութիւնները եւ նրա հարցադ-
րումները:

Յատկանշական է, որ Թեհրան-
Ղոմի ողջ ճանապարհը ոստիկա-
նութեան եւ անվտանգութեան ու-
ժերի խիստ հսկողութիւն տակ էր
գտնուում:

Նոյն օրը, կիրակի, Սեպտեմբե-
րի 4-ին ժամը 3:30-ին, ըստ նա-
խապէս կայացած պայմանաւոր-
ւածութեան, երկու նախարարնե-
րը երկու տարւայ համատեղ աշ-
խատանքի պայմանագիր ստո-
րագրեցին, որը կը ներկայացւի
ստորեւ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաշվի առնելով երկու երկրնե-
րի բարիդրացիական յարաբերու-
թիւնները եւ երկկողմ

համագործակցութիւնը զար-
գացնելու անհրաժեշտութիւնը՝
կայացած բանակցութիւնների
արդիւնքում ձեռք բերեցին հե-
տեւեալ համաձայնութիւնները:

1. ՀՀ-ում մասնաւոր հատ-
ւածների համատեղ ներդրում-
ներով անասնաբուծութեան բնա-
գաւառում (խոշոր եւ մանր եղջե-
րաւոր) իրանական սելեկցիայի
Յոլշտիներին եւ կաթնատու այլ
ցեղերի բուծման եւ տոհմային
երիւնջների աճեցմամբ զբաղուող
տաւարաբուծական համալիր
ստեղծելու ուղղութեամբ աշխա-
տանքների շուրջ:

2. Հայկական կողմը հե-
տաքրքրութիւն ցուցաբերեց Իրա-
նում հնդկահաւի եւ ջայլամի բուծ-
ման ձեռքբերումների նկատմամբ
եւ ցանկութիւն յայտնեց իրանա-
կան փորձի ներդրմամբ Հայաս-
տանում եւս զարգացնել այդ
թռչունների բուծումը:

3. Հաշվի առնելով ԻԻՀ

հնարաւորութիւնները ձկնաբուծութեան եւ ջրային կենդանիների բուծման բնագաւառում, ինչպէս նաեւ Հայաստանում տւեալ արդիւնաբերութեան համար բարենպաստ պայմանների առկայութեան հանգամանքը՝ հայկական կողմը հետաքրքրութիւն ցուցաբերեց Իրանից Հայաստան ակալուլտուրաներին անհրաժեշտ ձկան կերի, մանրածկան մերմուծմանը:

4. Երկու երկրներում աճեցւող պտղատեսակների փորձնական նպատակով փոխանակման եւ բոյսերի վնասատուների դէմ պայքարի կենսաբանական մեթոդների կիրառման ուղղութեամբ համատեղ հետազօտական աշխատանքների համադրում:

5. Իրանական կողմն առաջարկեց կազմել ծրագիր՝ իրանական տեխնոլոգիաներով եւ սարքաւորումներով Հայաստանում արդիւնաբերական եւ կիսաարդիւնաբերական ջերմոցային տնտեսութիւններ ստեղծելու ուղղութեամբ, հաշի առնելով հայկական կողմի հետաքրքրութիւնն այդ ոլորտի նկատմամբ: Համաձայնութիւն ձեռք բերեց համապատասխան ներկայացուցիչների մասնակցութեամբ վարել երկկողմ մասնագիտական բանակցութիւններ:

6. Քննարկել իրանական արտադրութեան տարբեր մշակաբոյսերի սերմերի, պատաստանութիւնների ձեռքբերման եւ Հայաստան ներկրման հնարաւորութեան հարցեր:

7. Ֆինանսաւորման պայմանների շուրջ համաձայնութիւն ձեռք բերելուց հետոյ կը համագործակցեն Թաւրիզի տրակտորաշինական գործարանից տրակտորներ եւ գիւղատնտեսական գործիքներ Հայաստան ներկրելու հնարաւորութեան վերաբերեալ:

8. Համատեղ գիւղատնտեսական ծրագրեր ֆինանսաւո-



րելու նպատակով ԻԻՀ կողմից միջոցներ տրամադրելու առաջարկը կուսումնասիրի հայկական կողմից եւ արդիւնքների մասին կը տեղեկացնի իրանական կողմին:

9. Կողմերը իրենց օրէնսդրութեանը համապատասխան գիւղատնտեսական ծրագրերի համար կը նպաստեն երկու երկրների մասնաւոր հատւածի գործունեութեանը:

10. Կողմերը պատրաստականութիւն յայտնեցին գիւղատնտեսութեան բնագաւառում համագործակցել ԻԻՀ Արեւելեան Ատրպատականի նահանգի հետ:

Երեկոյեան ՀՀ դեսպանատան կողմից հանդիպում էր կազմակերպել իրանահայ արտադրողների, արհեստաւորների, եւ այդ ոլորտներում հետաքրքրւողների հետ, որը տւեց մինչեւ ժամը 21:00-ը: Պրն. Կարապետեանը շատ տպաւորւած էր այդ մասնագէտների հանդիպումից:

Ապա նոյն երեկոյեան նւաստիս հրաւերով «Արարատ» մարզաւանի Այգեստանում կայացաւ ընթրիք, որին ներկայ էին թեմիս առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Ս.Արք. Սարգսեանը, ՀՀ Գիւղատն-

տեսութեան նախարարը, ՀՀ դեսպան պրն.Գրիգոր Առաքելեանը եւ նրա տեղակալ պրն. Գառնիկ Բադալեանը, պրն.Սահակ Եղիազարեանը, պրն.Անդրանիկ Պետրոսեանը, ԹՀԹ Թեմական Խորհրդի ատենապետ՝ պրն. Էդւարդ Բաբախանեանը եւ Հ. Մ. Ա. Կ. Ի-ի կենտրոնական վարչութեան նախագահ՝ պրն. Համիկ Խալոյեանը: Հայ ընտանիքների միջոցով զբաղւած միւս սեղաները եւս ճոխացնում էին մեր ընթրիքի երեկոն:

Երկուշաբթի առաւօտեան ժամը 5-ին պրն. Կարապետեանը եւ դեսպան Գրիգոր Առաքելեանը, պրն. Անդրանիկ Պետրոսեանի ուղեկցութեամբ ուղեւորւեցին Թաւրիզ, որպէսզի այցելեն Թաւրիզի տրակտորաշինական գործարանը: Հարկ է նշել, որ Իրան-Հայաստան Առեւտրի պալատը մօտ երկու տարի էր, ինչ զբաղւում էր այդ գործով: Ըստ պրն. Առաքելեանի՝ հանդիպումը շատ լաւ եւ արդիւնաւետ է եղել, պատիրակութիւնը ընդունել է բարձր մակարդակով եւ տեղի ունեցած բանակցութիւնները եւս բարեյաջող ընթացք են ունեցել:

ՊԱՏՎԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 7-Ի ՆԻՍՏ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԻԶՆԵՅԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Արփինէ Սիմանեան



Թւականիս 7 Սեպտ. 2011 թւականին, Հայոց Ազգ. Առաջնորդարանում, նախագահութեամբ Թ.Յ.Թ առաջնորդ Տ. Սեպուհ Արք.Սարգսեանի, կայացաւ 14-րդ Պատգամաւորական ժողովի 29-րդ նիստը:

Տէրունական աղօթքով բացւած ժողովին, որը շարունակութիւնն էր նախորդ օրւայ նիստի, ներկայ էին 31 պատգամաւորներ, դիւանը, Թեմական խորհուրդը եւ հաշիւեքննիչ մարմինը:

Նկատի էր առնուած քննարկել 3 օրակարգ՝

1. Իրանական 1390 թ. նախահաշիւը՝ հանգամանօրէն ներկայացնելով մուտքը, ելքը, բացը եւ յաւելումը:
2. Նոր սրահի կառոյցը Ձէթուն թաղամասում, Սուքերեան սրահին կից:
3. «Թունեան» դպրոցի վերակառուցումը, ծախսերը եւ հաշիւները:

ՆԱԽԱՀԱՇՎԻ ԲԱՏ

Նախահաշուում, որը շատ մանրամասնութեամբ ու բժախնդրութեամբ պատրաստել էր թեմական խորհուրդը, նկատի առնուած մօտ 2.5 միլարդ թուման մուտքի դիմաց, արձանագրուել էր 4 միլիարդ թումանի ելք, որը մտահոգութեան տեղիք տուեց եւ հարց ու պատասխանի քաշուեց:

Նախահաշուում ներառած էր՝ Ծխական տուրքը, եկեղեցիների մուտքն ու ելքը, կրթական բաժնին պատկանող, դպրոցների, մանկապարտէզների եւ ուսուցիչների ռոճիկները եւ նրանց հատուցումը, համահայկական խաղերի ծախսերը, բուժարան, բուրաստան, դիակառք, պայման եռամսեակի տպագրութեան ծախսը, Արտակ Մանուկեան թանգարան, Հ.Հ դեսպանատան շէնքը, կարիքաւոր ընտանիքների եւ օժանդակելու ֆոնդը եւ այլ կալւածքները... , պատգամաւորների կողմից հնչեցին հարցումներ եւ տրուեց

չափին ու բաւարար պատասխաններ Թեմական խորհրդի կողմից:

Նախահաշւի քւէարկման արդիւնքն էր՝ 32 կողմ, 1 դէմ եւ 1 ձեռնպահ:

200 ՄԻԼԻՈՆ ԹՈՒՄԱՆ ՆԱՅԻՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՇԷՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՍԱՐ

Ժողովի 2-րդ բաժինը սկսեց «Նայիրի» միութեան նոր կենտրոնատեղիի կառուցման հարցի քննարկումով: Նախատեսուած էր 200/000/000 թուման Թեմական խորհուրդը օժանդակելով «Նայիրի» միութեան համար կառուցել մի սրահ՝ «Սուքերեան» սրահի կողքին, որպէսզի Ձէթուն քաղաքամասի 4 քոյր միութիւնները միատեղ ու հերթաբար օգտուեն սոյն սրահից, եւ ապագայում եթէ արհեստաւորների միութիւնը եւս ցանկանայ միանայ նրանց, շէնքի վրայ կաւելանայ 2 յարկաբաժիններ եւս (Ի.Ա.Ս.Ս., «Նայիրի»),

«Անահիտ» եւ «Աշխարհատեսներ» միութիւններն էին այս հարցի մէջ):

Օրակարգը հաստատուեց 27 կողմ, եւ 4 ձեռնպահ քւէներով:

ԹՈՒՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՎՈՒՄՆԵՐԻ ՍԱՆ ԾԱՆՍԵՐՈՒՄ ԱՆՈՐԱՇՈՒԹԻՒՆ

Երրորդ օրակարգը «Թուներան» դպրոցի վերանորոգման ծախսերի շուրջ էր:

«Թուներան» դպրոցի քանդելու եւ ապա շինութեան համար սկզբուն նախատեսուել էր 70 միլիոն թուման բիւջէ, սակայն թեմական խորհրդի հաշուեքննիչ մարմնի անդամ Պրն. Էսիկ Տէր Ստեփանեանի միջոցոց ներկայացուած զեկոյցի համաձայն, սկզբնական փուլուն ծախսերը նախատեսուածից 203 տոկոսով յաւելուն է արձանագրել:

(Իհարկէ հաշիւները 2 տարի ուշացունով են յանձնուել թեմական խորհրդի հաշուապահին):

Ստեղծուած բացի համար շատ հարց ու պատասխաններ եղան: Այս հարցի շուրջ Պրն. Էսիկը յայտնեց, որ նա միայն կարող է ըստ առկայ փաստաթղթերի կարծիք յայտնել եւ հաշիւներ կազմել, այն ինչ եղած փաստաթղթերը շատ թերի են եղել:

Պատգամաւորները փնտրուն էին տրամաբանական պատասխաններ, կարծիք կար, գուցէ եղած ծախսերը անհրաժեշտ են եղել, այդ դէպքում ո՞ր են փաստերը: Առաջարկ եղաւ՝

1-Յանձնախումբ կեանք կոչել, որ խնդիրները հսկի:

2-Գումարը յանձնել դիւանի մարմնին եւ ինքը տնօրինի հարցը:

Ի վերջոյ որոշեց ժամանակի թեմական խորհուրդը եւ դպրոցի շինարարական մարմինը ներկայանան ժողովին եւ գործը քննարկեն ու առկայ հարցերին պատասխանեն: Այս հարց քննարկունը կը շարունակուի յաջորդ նիստերում:

ԴՈՒՔ ԻՆՉՊԵՆ, ՎԱՐՁՈՐ ԷՔ...

Ք. Յակոբեան

Շատ են մտածել այս մասին, բայց երբեք չեն կարողացել գոնէ ինձ համար լուծում կամ մի յարմար պատասխան գտնել:

Միգուցէ ձեզ համար էլ նոյն հարցն առաջացած լինի, որ, եթէ դուք սեփական բնակարան չունէք, ու մի խօսքով վարձուր էք, ի՞նչ պիտի անէք այս դժար ու ծանր դրութեան մէջ:

Յստակ կարող են ասել թէ բոլոր նրան ք, ովքեր վարձուր են ու չունեն սեփական բնակարան, այս վիճակին շատ լաւ ծանօթ են ու գիտեն բոլոր դժարութիւնները: Յատկապէս հայ ընտանիքների համար, վարձակալման համար յարմար տուն գտնելը մի մեծ մղձաւանջ է, որին ոչ մի խելամիտ լուծում չկայ:

Նրանցից քանիսի հետ զրուցելիս, կարելի է իմանալ թէ ինչ պայմանների ու դրութեան մէջ են, երբ յարմար պայմաններով ու գնով բնակարան են փնտրում:

Այս հարցին Տկն. Դ.-ն այսպէս է պատասխանում:

-Արդէն մօտ քսան տարւայ անուսացած են եւ ունեն երկու զավակ: Ստիպուած են բնակարանս դատարկել ու մի ուրիշը գտնել, բայց դժբախտաբար այս պահին բոլորովին հեշտ չէ, որովհետեւ միւթական խնդիրներից անցած, ես երեխաներիս պատճառով որեւէ ուրիշ թաղամաս չեմ կարող բնակուել՝ դպրոցի, միութեան, եկեղեցի եւ այլ հայկական կենտրոնների բերունով: Դրա համար ստիպուած եմ շատ ծանր վարձ վճարելով մնալ հայկական թաղամասում:

Տկն.Ա.-ն, ընկերուիւու խօսքն հաստատելով, ւաւելացնում է.

-Ամէն մի տեղափոխութեան պատճառով, որոշ տնային ապրանքներ ձեռքից տալիս ու ստիպուած նորն ենք գնում, իսկ այս խնդիրը տարիների ընթացքում անընդհատ կրկնուում է: Դրա կողքին տան վարձերի

չափից դուրս բարձրանալն է: Ամէն տարի վարձի հետ նաեւ բարձրանում է տան աւանդի գումարը, չգիտեն թէ այս ինչ օրէնք է եւ որտեղից է ծագել, բայց արդեօք մէկ բանուր կամ աշխատող, տարին ո՞րքան է վաստակում, որ թէ տան նախավճարի վրայ բաւարարի եւ թէ վարձի: Վերջապէս ամէն մի ընտանիք տարւայ ընթացքում ունի ուրիշ ծախսեր: Մի 60-65 տարեկան կին, այսպէս է գրոյցը շարունակում:

-Ես մի հանգստի կոչուած կին եմ մի չնչին թոշակ եմ ստանում, երեխաներս անուսացած են եւ իրենց կեանքով, ես այս թոշակով պէտք է վճարեմ թէ տան վարձի, թէ ուտել-խմելուս եւ թէ բուժմանս կապուած ծախսերի համար: Թէկուզ երեխաներս օգնուն են, բայց գիտեմ, որ նրանց համար էլ դժար է: Թոշակիս համարեա մեծ գումարն յատկացնուն եմ տան վարձին:

Տան հարցը, համարեա մեծ խնդիր է հայ ընտանիքների համար, ու դրանով հանդերձ որ, հայերը մեծ մասամբ գաղթել են դէպի Ամերիկա կամ այլ երկրներ, ու դրա հետ միաժամանակ անընդհատ բարձրարկ շէնքեր են կառուցուել, էլի տան հարցը չի լուծուում: Ովքեր բնակարան են ունեցել եւ վարձով են տուել ու գնացել, նրանք էլ իրենց Ֆինասական դժարութիւնների պատճառով, ստիպուած ճնշուն են վարձուրներին, որ ւաւելին վճարեն, իսկ նորաշէների գները, բոլորիս յայտնի է, թէ երկրի տնտեսական ճգնաժամի եւ սղաճի պատճառով ինչքան բարձր են:

Ամէն մի տեղափոխութիւն ունի իր չարչարանքն ու դժարութիւնը. ամէն մի տեղափոխութիւն պատճառով վնասուում ենք թէ հոգեպէս եւ թէ Ֆինանսապէս: Գիտնականներն ասուն են, թէ ամէն մի տեղափոխութեան հարուածը հաւասար է մի հրդեհի, որը փչացնուն ու ոչնչացնուն է ունեցուածքը:

Ն. ԶՈՒՂԱՅԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԶԵՆ ՀԱՆԻԵԼ

«Ագգ» օրաթերթը, իր 27 Օգոստոսի համարում հրատարակել Բրիտանական գրադարանի հայկական բաժանմունքի պատասխանատու՝ Ներսես աւագ քահանայ Ներսիսեանի հետ մի ընդարձակ հարցազրոյց: Տէր Ներսեսը այն անձնաւորութիւնն է, որ հրապարակեց Նոր Զուղային Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանի մանրանկարչութիւնների Լոնդոնում յայտնւելու պատմութիւնը հէնց «Ագգ» օրաթերթում: Հարցազրոյցի սկզբում նա բացատրութիւններ է տալիս իր եւ իր աշխատանքի ու մասնագիտութեան մասին:



«Ծագումով թեհրանահայ եմ: Աւագանի անունով՝ Վրէժ: Զաւակն եմ Դաւիթ եւ Սանդուխտ Ներսեսեանների: Երկուսն էլ վախճանաւծ: Աւագ եղբայրս եւ փոքրիկ քոյրս ապրում են Թեհրանում: Նախնական կրթութիւնս ստացել եմ Թեհրանում, ապա 9 տարեկան հասակում, բազմաթիւ այլ իրանահայ տղաների եւ աղջիկների նման ուղարկւեցի Կալկաթա՝ ուսումնաւարուցակւելու տեղի Մարդասիրական ճեմարանում: 1965թ. երանաշնորհ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցելութեան եկաւ Հնդկաստան: Այդ առիթով փափագ յայտնեցի կրթութիւնս շարունակել Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգեան ճեմարանում: Նոյն թւականին Կալկաթայից մեկնեցի Մայր աթոռ: Գեւորգեան ճեմարանի երեք տարւայ լսարանական բաժինն աւարտելուց յետոյ, այն

օրը, երբ պաշտպանեցի իմ աւարտական թեզը, մեկնեցի Լոնդոն՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն վեհափառ հայրապետի հովանաւորութեանը աստուածաբանական կրթութիւնս շարունակելու House of Sacred Mission Անգլիկան վանքում: Մէկ տարւայ ուսումնական շրջանն աւարտելուց յետոյ, դիմեցի Լոնդոնի համալսարանի Kings College՝ ուսումնական շրջանս շարունակելու համար: Այն աւարտեցի՝ ստանալով «մագիստրոս աստուածաբանութեան» կոչումը: Յետոյ ընդունւեցի նոյն համալսարանի Modern Greek and Byzantine Studies ֆակուլտետը, որտեղ յայտնի բիւզանդագէտ Prof. D. M. Nicol -ի հսկողութեան տակ պատրաստեցի դոկտորական թեզս՝ «Թոնդրակեան եւ այլ աղանդաւորական շարժումները Հայաստանում», որի յաջող պաշտպանութեան համար ստացայ «դոկտոր փիլիսոփայութեան» կոչումը: Թեզիս արտաքին քննիչներից մէկը՝ հանգուցեալ Prof. D. M. Lang -ն էր: Այս աշխատութիւնը որպէս մենագրութիւն

ունեցել է երկու հրատարակութիւն: ... Դոկտորական թեզս պաշտպանելուց յետոյ դիմեցի աշխատանքի Բրիտանական թանգարանին (այժմ Բրիտ. գրադարան), ուր պահուում են արժեքաւոր հայկական ձեռագրեր, հնատիպ գրքեր, քարտէզներ: ... Ես առաջինը եղայ, որ մշտական աշխատանքի կոչւեցի այս հաստատութեան մէջ որպէս մասնագէտ Հայկական բաժանմունքի: Կարճ ժամանակաշրջանում պատրաստեցի եւ հրատարակեցի գրադարանի «Հնատիպ գրքերի ցուցակը, 1512-1850թթ.՝ «ներառնելով Oxford քաղաքի Bodleian Library-ի հաւաքածոն եւս: Սա առաջին հրատարակութիւնն էր անգլերէն լեզուով, նւիրւած հայ տպագրութեան պատմութեան: . . . Այս յաջողութիւնից յետոյ Հայկական բաժանմունքի գոյութիւնն ապահովւելու համար, որոշեցի իմ վրայ առնել աւանդապահութիւնը ողջ Արեւելեան քրիստոնեայ քոյր եկեղեցիների մշակութային ժառանգութեան պահակութիւնը Բրիտանական

գրադարանում: Նման բաժանմունք գոյություն չունի մինչ այդ: Բաժանմունքները կարգաւորւած էին համաձայն լեզուական խմբաւորումների (հայկականը՝ պարսկականի հետ, ղպտերէնը՝ յունականի, ասորերէնը եւ եթովպերէնը՝ եբրայականի եւ այլն):»:

Հարցազրոյցի հիմնական մասը նւիրւած է Ն. Ջուղայի թանգարանի մանրանկարչութիւնների անհետացմանը:

- Ձեր շնորհիւ եւ «Ազգ»-ի հրապարակումով հայ հանրութիւնը տեղեկացաւ Նոր Ջուղայի Ար. Ամենափրկիչ վանքի թանգարանի ձեռագրերից պոկւած մանրանկարների եւ սրբապատկերների Լոնդոնում յայտնելու մասին, որը լայն արձագանք ունեցաւ թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Ափիւռքում: Ըստ երեւոյթին յանցագործները դիմելով ձեզ՝ կատարել են ամենաճիշտ եւ միաժամանակ ամենասխալ ընտրութիւնը: Ի՞նչ կասեք այդ մասին:

- Ամենափրկիչ վանքի ձեռագրերի պատկերների վանդալիզմը մեծագոյն հարւածն է հայ ժողովրդի կարողութեանը՝ տէր մնալու իր մշակոյթային ժառանգութեան. «օրինեա եւ պահեա զժառանգութիւնս մեր», աղերսում է պատարագիչը ամէն կիրակի: Այս պարագային յանցանքը կատարողները ոչ միայն ընտրել էին ամենագրաւիչ ձեռագրերը, այլ նաեւ սխալ անձը՝ խորհուրդ հարցնելու համար: Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի շուրջ 600 ձեռագրերից նրանք ընտրել էին ամենաարժեքաւոր ձեռագրերը եւ սա ինձ ենթադրել է տալիս, որ այս գողութիւնը կատարել է ըստ պատւերի: Այստեղ իմ մտահոգութիւնները ի մի բերելու համար պիտի կրկնեմ մի հայ գրչի խօսքերը.

«Տէր, վայ, վայ, վայ, վայ ինձ, եւ անգօր, եւ անտէր ազգիս մեռում, զի չունի մի գլուխ, ունիմք

քահանայութիւնն, բայց տկար է եւ անգօր» (Մատենադարան, Ձեռ. 151):

- Ինչպիսի՞ն էր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ իրանահայ թեմերի հակազդեցութիւնը, երբ դուք նրանց յայտնեցիք պատառիկների մասին:

- Ես, ձեռագրերից պատռւած, հանւած մանրանկարների թւականը, թերթահամարը հաստատելուց յետոյ, լուրն անմիջապէս ուղարկեցի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Թեհրանի գերաշնորհ առաջնորդին եւ Նոր Ջուղայի Թեմական խորհրդին: Իմ ցանկութիւնն էր ճշտել եւ իմանալ ստոյգութիւնն իմ կասկածի, եւ ստոյգ ու վաւերական լինելու պարագային, լուր տալ միջազգային Interpol ընկերութեանը, որն անմիջապէս գրանցում է գողացւած արեւստի տւեալները եւ զգուշացնում գնողներին: Բաւական ժամանակ լռութիւնից յետոյ մի անգամ եւս դիմեցի վերոյիշեալներին՝ մէջբերելով Աւետարանի խօսքը. «չէ փոյթ»... Պատասխան ստացայ դիւանապետից՝ ինձ յայտնելով, որ իրենք տեղեկ են կատարւածի մասին եւ ամէն քայլ առել են կասեցնելու դրանց վաճառքը: Իսկ Նոր Ջուղայի առաջնորդն իր հակիրճ պատասխան գրութեան մէջ մէջբերում է անում հայկական մի առածի, որն է «Լաւ է խաղողը ուտել, քան այգեպանին ծեծել»: Ցաւօք, ես այս առածի իմաստը չեմ հասկացել այս պարագային: Ես ոչ խաղող ուտելու ծարաւ ունեմ եւ ոչ էլ միտումը այգեպանին ծեծելու: Նաեւ ինձ վստահեցնում էր, որ յանցագործներին շուտով բռնելու են եւ պատառիկները վերադարձնելու են վանք:

- Նման դէպքեր նախընթաց ունեցել են, ո՞րն է ձեր կարծիքով պատառիկները վերադարձնելու ամենայուսալի ճանապարհը:

- Պատառիկների վերադարձի ամենայուսալի պահը այն կը լինի, երբ գողերը լսելով իրենց խղճի ձայնին եւ մեր գրիչների պատուրին. «Որ ոք յանդգնեսցի գրաւի առնելոյ կամ ծախելոյ ի յազգականաց եւ յամենայն արեամբ մերձաւորաց, եթէ կարգաւոր իցէ, մասն ընդ Յուդայի եւ ընդ Արիոսի առջէ, եւս եթէ յաշխարհական ընդ խաչահանողացն համարեսցի եւս ինքն նզովեալ եղիցի» (Մատենադարան, Ձեռ. 198), դրանք կը վերադարձնեն հայ ժողովրդի պահած-պահպանած դարաւոր հաստատութիւններից մէկին՝ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքին: Վանքի անւան «փրկիչ» բնութագրումը պէտք է լինի ամէն հայ անհատի պարտականութիւնը:

- Սպահանի Առաջնորդարանը յայտարարել է, որ պատառիկները աճուրդի են հանել Անգլիայում, կարելի՞ է իմանալ, թէ ո՞ր ընկերութիւնն է դրանք աճուրդի հանել եւ նրան պատասխանատուութեան հրաւիրել:

- Ձեռագրերի պատառիկները աճուրդի չեն հանել: Իւրաքանչիւր պատուաւոր հաստատութիւն, որեւէ արեւստի առարկայ վաճառելու կամ գնելու պարագային պէտք է անցկացնի այսպէս կոչւած Diligence Test-ի բոլոր չափանիշները: Պատառիկների պարագային դա անհնարին է, բացի այն պարագային, որ դրանք վաճառւեն անհատների՝ By Private Treaty (համաձայնագիր վաճառողի եւ գնողի միջեւ):

- Ունե՞ք որեւէ պատգամ ընթերցողներին:

- Շատ կարեւոր է, որ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագրերի մանրանկարների աղճատման հարցը առիթ եւ պատճառ չդարձնել հին քննութիւններ ու հակամէտ կարծիքներ արժարծելու եւ լուծելու:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ը ԵՐՐՈՐԴ ՀԱԶԱՐԱ ԱՐԻԻՆԱԼԻ ՍԿԻԶԲ

ժ. Մնացականեան

Տասը տարիներ են անցնում Սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողութիւնից, որի ընթացքում հողի հետ հաւասարեցին ԱՄՆ-ի Նիւ Եորք քաղաքի համաշխարհային առետրի կենտրոնի երկուրեակ երկնաքերները, Վաշինգտոն Դի Սի-ում փլեց երկրի պաշտպանութեան նախարարութեան շէնքի մի մասը եւ հաւանական էր նոյնը պատահէր Ամերիկայի նախագահական պալատին կամ խորհրդարանի շէնքին, եթէ դրանց ուղղած ինքնաթիռը, շնորհիւ ուղեւորների յանդուգն դիմադրութեան, չկործանէր նախքան իր նպատակը իրագործելը: Արդէն բոլորը գիտեն պատմութեան հիմնական տուեալները: 2001 թւականի Սեպտեմբերի 11-ին, ահաբեկիչները, թուով 19-ը, համադրւած գործողութեան շրջանակում, առեւանգում են ԱՄՆ-ի տարածքում թռչող 4 ինքնաթիռներ. դրանցից երկուսը, Ամերիքըն 11 եւ Իւնայթըդ 175 թօռքները բախուում են համաշխարհային առետրի կենտրոնի երկու աշտարակներին, մտաւորապէս 20 րոպէ տարբերութեամբ, իսկ երրորդը, Ամերիքըն 77 թռիչքը, առաջին պայթիւնից մտաւորապէս մի ժամ յետոյ՝ հարւածում է Պենտագոնը:

Երկու դէպքերն էլ կրում են սիմուլիկ նշանակութիւն. Նիւ Եորքի երկու աշտարակները, լինելով համաշխարհային առետրի կենտրոն, մի կերպ խորհրդանշում են համաշխարհային կապիտալիստական համակարգը, իսկ երբ հարւած է ստանում Պենտագոնը, որտեղից օրէնքով պիտի ղեկավարւի երկրի պաշտպանութեան գործողութիւնները, դա պարզապէս պատիւ չի բերում Ամերիկային եւ ապացուցում է նրա պաշտպանողական համակարգի խոցելիութիւնը: Իսլամական Ալ Ղաիդա կազմակերպութիւնը, Բեն Լադենի ղեկավարութեամբ, յանձն է առնում պայթիւնների պատասխանատուութիւնը:

Սակայն այս խորհրդանշական կողմը մի բան է, դէպքերի իրական հետեւանքները այլ բան: Այս դէպքը իրապէս դառնում է երրորդ հազարամեակը բնորոշող իրադարձութիւնների սկիզբը: ԱՄՆ-ի ղեկավարները ասես հէնց այսպիսի առիթ էին փնտրում, սկսելու մի նոր ծաւալապաշտական ռազմավարութիւն, որը պիտի տարածէր ողջ աշխարհով մէկ: «Պայքար ահաբեկչութեան դէմ»-ը դառնում է ԱՄՆ-ի նոր կարգախօսը: Սովետական միութեան փլուզումից յետոյ:



ՄԵԱԿԻ Ը



ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Սեպտեմբեր 11, 2001

Առաւօտեան ժամը

8:20

Ֆեդերալ ավիացիայի կառավարման Բոստոնի կենտրոնի թռիչքների վերահսկիչները եզրակացնում են, որ հաւանաբար թռիչք 11-ը առեւանգւել է:

8:21

Թռիչք 11-ի տրանսպոնդերը անջատուում է, բայց ինքնաթիռը մնում է ռադարի վրայ որպէս առկայծող մի լոյս՝ առանց յաւելեալ տեղեկութիւնների:

8:26

Թռիչք 11-ը կատարում է 100 աստիճան պտոյտ եւ շարժւում է դէպի Նիւ Եորք:

8:42

«Իւնայթթդ էր լայնգ»-ի թռիչք 93-ը 40 րոպէ ուշացունով մեկնում է Նիւ Եորքի օդակայանից:

8:42 - 46

Թռիչք 175-ը առեւանգւում է:

8:46

Երկու F-15 ռազմական ինքնաթիռներ հրաման են ստանում բարձրանալ Մասաչուսետի մի կայանից, թռիչք 11-ին դիմակայելու նպատակով, բայց քանի որ օդանաւի ռադարը անջատուած է, օդաչուները չեն գտնում թիրախը:

8:48:26

Թռիչք 11-ը, մօտաւորապէս 790 կմ ժամում արագութեամբ բախում է համաշխարհային առետրի կենտրոնի հիւսիսային աշտարակի հիւսիսային կողմին, 93 եւ 99-րդ յարկաբաժինների միջեւ:

8:50 - 54 (մօտաւորապէս)

Թռիչք 77-ի առեւանգումը սկսւում է:

8:56

Թռիչք 77-ի ռադարի կապը ընդհատուում է: Ամերեւոյթ դարձած օդանաւը 36 րոպէ թռչում է դէպի Վաշինգտոն Դի Սի:

8:58

Թռիչք 175-ը ուղղւում է դէպի Նիւ Եորք:

9:02:59

Թռիչք 175-ը 950 կմ ժամում արագութեամբ բախում է Գամաշխարհային առետրի կենտրոնի հարաւային

աշտարակի հարաւային կողմին, 77 եւ 85-րդ յարկաբաժինների միջեւ:

9:03

Նախագահ Բուշի մուտքը տարրական մի դպրոցի դասարան, արպէս ուսումնական հաստատութեան այցելութեան ծարագրի մի մաս:

9:37:46

Թռիչք 77-ը բախում է Պենտագոնի արեւմտեան կողմին: Զրդեհ է բռնկում:

9:59

56 րոպէ բախումից անց, Զարաւային աշտարակը սկսում է փլել:

10:03:11

«Իւնայթըդ էր լայն»-ի թռիչք 93-ը կործանում է Պենսիլւանիա նահանգում, ահաբեկիչների եւ ուղեւորների միջեւ առաջացած բախումների հետեւանջով: Ենթադրում է, որ այդ օդանաւը ծրագրած էր բախել Սպիտակ Տանը կամ Քապիթոլ Զինին:

Երեկոյեան

Ժամը 5:20:30-ին

Զամաշխարհային առեւտրի կենտրոնի համար 7 շէնքը. մի 47 յարկանի շէնք, որի վրայ էին թափել կրակ եւ ւաւար, փլում է: Դա Նիւ Եորքի շտապ օգնութեան կենտրոնն է, որը նախատեսել էր հէնց Սեպտեմբեր 11-ի նման դէպքերի ժամանակ հակազդելու համար:

Ժամը 7-ին

Շարունակում է զոհերին աւարի տակից հանելու եւ փրկելու աշխատանքը: Զրշէջ կայանը եւ ոստիկանութիւնը աշխատում են գրանդ գրոյում (այդ ժամանակուանից այսպէս կոչւեց երկու ոչնչացած աշտարակների վայրը): Օգնութեան համար պատրաստ են պողպատի եւ շինարարութեան մեծ թուով բանւորներ: Ձոհերի կամ հաւանական զոհերի բարեկամներն ու ընկերները ձեռքներն առած՝ տնային համակարգիչների միջոցով տպւած իրենց հարազատների մեծ պատկերները, շրջում են զանազան շրջաններում:



տոյ, այլեւս չկար Կարմիր վտանգը, որով հնարաւոր լինէր արդարացնել ամէն տեսակի ոտնձգութիւն աշխարհի զանազան մասերում եւ այժմ «միջազգային ահաբեկչութեան վտանգը» փոխարինում է դրան: ԱՄՆ-ի նախագահ Բուշի ելոյթները դառնում են աւելի ագրեսիւ եւ աւելի միլիտարիստական: Զակատերորիստա-

կան համաշխարհային պայքարի պատրւակով, ամերիկեան զինեալ ուժերը, արեւմտեան այլ երկրների օգնութեամբ գրաւում են երկու երկրներ՝ Իրաքը եւ Աֆղանստանը, որոնցից առաջինը, պարզում է, ոչ մի կապ չունի Սեպտեմբերի 11-ի դէպքերին, իսկ երկրորդը, եթէ անուղղակի կապում է այդ գործողութիւններին,

դա Ալ Ղաիդայի ղեկավար Բեն Լադենի այնտեղ հաստատուած լինելու առումով է միայն: Սակայն գրաւում է երկիրը, տապալում են Թալիբների կարգերը, բայց չի գտնուում Բեն Լադենը: Նա ամերիկացիների ձեռքով սպանուած է միայն տասը տարի յետոյ, այն էլ ոչ Բուշի նախագահութեան շրջանում, այլ Բարաք Օբամայի օրօք:



ԱՄՆ-ի մօտ դաշնակից՝ Պակիստանի անվտանգութեան ուժերի մեղսակցութիւնը Բեն Լադենին թաքցնելու գործում, կրկին հարց է առաջացնում Ալ Ղաիդայի եւ ԱՄՆ-ի որոշակի անվտանգութեան շրջանակների միջեւ կապի վերաբերեալ:

Ժամանակին, մախքան սովետական միութեան փլուզումը, երբ ԱՄՆ-ի ռազմավարութիւնն էր այդ

երկրի հարաւային սահմանները շրջապատել իսլամական երկրներով, այսպէս կոչւած մի կանաչ գօտիով, Ամերիկան, տարածաշրջանում իր դաշնակիցների՝ Պակիստանի եւ Սաուդեան Արաբիայի միջնորդութեամբ, եւ ինչու չէ նաեւ ուղղակի կապերով, հովանաւորել էր Ալ Ղաիդայի եւ Թալիբների շարժման ձեւաւորմանը, եւ այժմ Ամերիկայի ժողովուրդը, դրա արդիւնքը զգում է իր կաշի

վրայ:

Սեպտեմբերի 11-ը առիթ ստեղծեց նաեւ պարզապէս ոտնահարել մարդու իրաւունքների սկզբունքները: Օրինական դարձան մինչ այդ անօրինական համարող գաղտնի լսումներն ու մարդկանց անձնական կեանքի մասին տեղեկութիւնների հաւաքումը: Սակայն մարդու իրաւունքների ոտնահարման խորհրդանիշը դարձաւ Գուանտանամոյի

Զոհերի թիւը (բացի ահաբեկիչները)

Նիւ Եօրք	Համաշխարհային առեւտրի կենտրոն	2606 մարդ
	Ամերիքըն 11	87
	Իւնայթըդ 175	60
Արլինգտոն	Պենտագոն	125
	Ամերիքըն 77	59
Շանքսվիլ	Իւնայթըդ 93	40
	Ընդհանուր՝	2977 մարդ

9/11 հետաքննիչ յանձնախմբի տւեալների համաձայն, հարիւրաւոր մարդ սպանւել է հէնց բախման պահին՝ անմիջապէս: Միւսները, երբ աշտարակները փլուել են, թակարդի մէջ են ընկել ու զոհուել: Աշտարակներում զոհուածների 90 տոկոսը այն այցելուներն ու աշխատակորներն են եղել, ովքեր գտնուել են բախման վայրից աւելի բարձր յարկերում: Նրանք մահացել են կամ ծուխի ներշնչման հետեւանքով, կամ իրենց վայր են նետել պատուհաններից՝ կրակի եւ ծուխի ճարակ չդառնալու համար: Հարաւային աշտարակում փախուստի աստիճաններից մէկը չի վնասուել. դրանով կարողացել են փախչել ու փրկուել մեծ թւով մարդիկ: Այդ պատճառով էլ այս աշտարակի զոհուածների թիւը միւս աշտարակի համեմատութեամբ աւելի սակաւ է եղել՝ 600 մարդ, այսինքն՝ հիւսիսային աշտարակի զոհերի թիւ համարեա կէսը:

Զոհուել են 411 փրկարարներ, ովքեր փորձել են փրկել վտանգուածներին եւ հանգցնել կրակը: Նիւ Եօրքի հրշէջկայանը կորցրել է 341 մարդ:



բանտը, ուր պահուում են ահաբեկչական կազմակերպությունների հիմնականում մուսուլման անդամները: Մի քանի կալանաւորների ազատութիւնից յետոյ նրանց հաղորդած տեղեկութիւնները, նրանց ի վերջոյ ապացուցած անմեղութիւնը, եւ բանտի ներսից հրապարակած լուսանկարները, խօսում են այնտեղ տիրող անմարդկային պայմանների մասին: Բանտը գտնուում է Կուբայի հողում գտնուող, բայց իրականում ԱՄՆ-ի վերահսկողութեան ներքոյ գտնուող Գուլանտանամօ թերակղզիում, եւ այդ պատճառով (աւելի ճիշտ է ասել պատուակով), Ամերիկայի կառավարութիւնը յաւակնում է, որ քանի որ այդ թերակղզին պաշտօնապէս ԱՄՆ-ի տարածքում չի գտնուում, պարտադիր չէ, որ այդտեղ պահուող մեղադրեալները դատուեն ԱՄՆ-ի օրէնքների համաձայն:

Սեպտեմբեր 11-ի ահաբեկչութիւնը, մի կողմից ծայր տւեց նոր հակաիսլամական զգացումների, իսկ միւս կողմից բարձրացրեց նոր հակաամերիկեան սենտի-

մենտ ողջ աշխարհում: Մի խօսքով, երկու կողմում էլ առաջացրեց աշխարհի զարգացումները որպէս նոր խաչակրաց արշաւանք տեսնելու հակումը:

Ամերիկայի ներքին կեանքում, Բուշը նախ յաջողեց հրահրել ժողովրդի հայրենասիրական զգացումները եւ ձեռք բերել նրանց մեծամասնութեան հովանաւորութիւնը, Իրաքում եւ Աֆղանստանում ռազմական գործողութիւններ սկսելու համար: Սակայն, երբ պարզեց դրանց սակաւ առնչութիւնը Ալ Ղաիդայի հետ, երբ երկարածգւեցին ռազմական գործողութիւնները եւ բարձրացան ամերիկացի զինուորների զոհերի թիւը, ժողովուրդն սկսեց դժգոհել: Միաժամանակ, հէնց սկզբի օրերից, ոմանք սկսեցին կասկածներ յայտնել ԱՄՆ-ի կառավարութեան առնւագն որոշ շրջանակների մեղսակցութեան մասին: Կասկածելի նշաններ կային յատկապէս աշտարակների փլման ձեւի մասին, որը աւելի շուտ նմանում էր պայթուցիկ դրւած եւ ծրագրւած փլումների: Կասկածելի էր նաեւ

Պենտագոնի համար պաշտպանողական որեւէ բան չանելու հանգամանքը, թէւ ունեցել են բաւական ժամանակ:



Ինձ միշտ յուզել է այն հարցը, թե վերջին պահին ի՞նչ են զգացել Սեպտեմբեր 11-ին, մարդատար օդանավը Նիւ Եորքի զոյգ երկնաքերներին ու Պենտագոնին հարձակող երեք օդաչուներն ու օդանավերի մէջ գտնուող տերորիստական «անձնակազմը»: Չէ՞ որ նրանք յամենայն դէպս եղել են կրթած օդաչուներ եւ ոչ թէ հասարակ մահապարտներ, որոնց անձնասպանութեան կամ անձնազոհութեան մասին ամէն օր լսում ենք ՋԼՄ-ներից: Գուցէ նրանք ունեցել են իրենց վերադարձին սպասող կին, զաւակներ, հայր ու մայր: Կատա՞կ է, լինել գիտակից, կիրթ մարդ ու այդպէս «հեշտ ու հասարակ» բաժանել հարազատներից ու կեանքի վայելքներից: Անխնայ դատապարտելու

փոխարէն, մի անգամ փորձէ՞ք ձեզ դնել նրանց տեղը: Կը գնայի՞ք նման քայլի առաջ ունենալով այդ տեսակի արկածախնդրական, ստոյգ մահը:

Արդեօք, դա կրօնական հաւատքի ո՞ւժն է, որ մղում է նրանց նման անհաւատալի ինքնազոհաբերութեան, թէ՞ հայրենասիրութիւնը, արդարատենչութիւնը, գաղափարը... կամ մի ուրիշ բան: Թէեւ տուեալ մղումի իրացումը կրում է տեռորիստական բնոյթ, բայց չեն վարանում ասել, որ դա կարելի է համարել նաեւ իւրօրինակ հերոսութիւն: Այսպիսի հերոսութիւններ կատարել են ճապոնացի օդաչուները Բ. Աշխարհամարտին, երբ, յանուն հայրենիքի, իրենց կորածանիչներով բախուում էին ամերիկեան ռազմաճակատներին:

Մի երեւոյթ, որ պատերազմը տանուլ չտալու համար ԱՄՆ-ին ստիպեց «ապաւիճել» ատոմային ռումբի օգնութեամբ:

Արդեօք, քրիստոնեաներն էլ ունեցե՞լ են այսպիսի մասշտաբով մահապարտութեան դէպքեր: Եթէ կան օրինակներ, խնդրում են յուշէք: Ի՞նչ է, քրիստոնեաները վախկո՞տ են, թէ՞ առաջնորդում են քրիստոնեութեան վեհ կամ բարի դաւանանքով, որը յորդորում է՝ ներել ու չսպանել, երեւի նաեւ՝ չսպանել... Այստեղ հարց է առաջանում, այդ դէպքում ինչո՞վ կարելի է արդարացնել քրիստոնեայ պետութիւնների կատարած արշաւանքները, ցեղասպանութիւնները, ինկվիզացիան, գաղութատիրութեան ու ստրկատիրութեան բազմաթիւ օրինակները, հրահրած աշխարհակործան պատերազմները, կաթոլիկ մաֆիաների չարագործութիւնները...

Իսկ այդ պա՞հը... երբ ինքնաթիռի խցիկից երեւում է աստիճանաբար մեծացող օրիելտը, ինքնաթիռը ուր որ է կը բախւի շէնքին... դու կարող ես դէկի թեթեւ շարժումով բարձրութիւն վերցնել կամ շրջանցել, բայց դա չես անում, միայն նայում ես առաջ՝ լցւած գերմարդկային վճռականութեամբ... Չես մտածում նոյնիսկ կատարած քայլի արդիւնքը տեսնելու եւ ըմբոշխնելու մասին, ինչը բնորոշ է մարդկային հոգեբանութեամբ...

Բա, սա հերոսութիւն չէ, ի՞նչ է:

Սեպտեմբեր, 2011



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱՏՆԵՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՅԸ ԹԵՂԵԱՆ

Լեւոն Ահարոնեան



Տեղեակ էի, որ շաբաթ առաւօտեան 33 գիւղատնտեսութեան նախարար պրն. Սերգէյ Կարապետեանը, Իրանի «Ջահադէ Քեշաւարզի»-ի (Գիւղատնտեսութեան նախարարութեան) հրաւերով այցելելու էր Իրան: Ժամանելուց առաջ 33 դեսպանատան եւ Իրանի հիւր-ընկալ նախարարութեան կողմից արդէն նախատեսել էր պրն. Սերգէյ Կարապետեանի այցելութեան եւ հանդիպումների ծրագիրը: Պրն. Կարապետեանի նախատեսուած մէկ շաբաթեայ այցելութեան ծրագիրը, նրա զբաղւածութեան պատճառով կատարւելու էր աւելի սեղմ ժամանակահատուածում: Շաբաթ առաւօտ, Սեպտ. 3-ին, ըստ ծրագրի, նախարարը հասաւ Թեհրանի «Էմամ Խոմէյնի» օդակայանը, որտեղ

պաշտօնական ընդունելութիւնը կատարեց նախարարի տեղակալի միջոցով: Առաւօտեան ժամը 10:00-ին պատւիրակութիւնն ուղեւորեց դէպի Քարաջ՝ Գիւղատնտեսական Բիւրօյի կենտրոն, ապա ժամը 15:30-ին հանդիպում ունեցաւ Իրանի գիւղատնտեսութեան նախարար դոկտ. Սադեղ Խալիլեանի հետ:

Երեկոյեան պատւիրակութիւնը ընթրիքի էր հրաւիրւած Իրանի գիւղատնտեսութեան նախարարի մօտ, որի հրաւիրեալների շարքում էի նաեւ ես՝ տողերիս հեղինակը: Երկու նախարարների եւ Իրանի նախարարութեան բարձրագոյն պաշտօնեաների ներկայութեամբ ստեղծուած մտերմիկ մթնոլորտում, խօսակցութիւնն ընթացաւ երկու նախարար-

ների միջեւ եւ նախարար Կարապետեանն իր շնորհակալութիւնն յայտնեց պրն. նախարար Խալիլեանին այս հրաւերի համար: Այս գրոյցի ընթացքում ես էլ իմ հերթին արտայայտեցի, նշելով, որ 12 տարի՝ 1956-ից 1968-ը, ծառայել եմ Իրանի գիւղատնտեսութեան նախարարութեան մէջ: Ասածս զարմացրեց պրն. նախարարին եւ նրա տեղակալին: Նախարարի տեղակալը՝ դոկտ. Փուր Յեմմաթն ասաց, թէ դա եղել է իր ծննդից առաջ: Իսկ նախարարն էլ նշեց, թէ ինքն այդ թւականներին դեռ երեխայ է եղել:

Ընթրիքն աւարտելով, մի քանի րոպէ եւս զրուցելուց յետոյ, Իրանի գիւղատնտեսութեան նախարարն իր զործակիցների հետ թողեց նախարարութեան պատկան

հիւրանոցը, որը գտնուում էր Վելենջաքում, իսկ պրն. Կարապետեանն ու իր պաշտօնեայ պրն. Անդրանիկ Պետրոսեանը, եւ նախարարութեան արտաքին կապերի վարիչը մնացին հիւրանոցում: Ըստ ծրագրի միւս օրը նախարար Կարապետեանը եւ դեսպան Գ. Առաքելեանը, ես եւ պրն. Ռեգա Յէյդարին պիտի ժամանէինք Ղոմ, որպէսզի այցելէինք այնտեղի «Ֆադաք» ձիթապտղի հսկայական այգին: Այդ այցելութիւնն իմ առաջարկով ու պնդումով կատարուեց հետեւեալ պատճառով.

Տարիներ առաջ ես որոշել էի ձիթապտղի 20 հազար տնկի նւիրել Հայաստանին. այդ օրերին պրն. Յենրիկ Քուչինեանը Լոռու մարզի նահանգապետն էր: Նա իմ առաջարկները ընդառաջեց եւ Լոռու մարզի այգետէրների հետ մի հանդիպում նշանակեց: Մեծ ընդառաջում գտած այդ առաջարկը դժբախտաբար չիրականացաւ պրն. Քուչինեանի հանգամանքից հեռանալու պատճառով: Բայց ես յիշելով իմ խոստումը, տարիներ շարունակ մտապահել էի, սպասելով յարմար առիթի՝ այն իրականացնելու համար: Դա մեծ եկամուտ է խոստանում գիւղացիութեանը: 2008 թականին Իրանի Առեւտրի ու Արդիւնաբերութեան պալատի կողմից, որն ընդգրկում էր «Շորայէ Ալիէ Ձէթուն»-ը, ես, պրն. Շահրոխ Չահիրին եւ պրն. Ալ Էսհադը՝ Իրանի նախկին առեւտրի նախարարը, հրաւիրեցինք Ղոմի «Ֆադաք» այգին: «Ֆադաք»-ը այն պարտէզի անունն է, որը մուսուլմանների Մուհամմեդ մարգարէն նւիրել էր իր դստեր՝ Ֆաթեմէ Չահրային: Այգին այցելելուց յետոյ ուղղակի ապշած էի մնացել: Նրա տէրը՝ պրն. Բուլանդ Նազարը համարեալ յիսուն տարեկան մի մարդ էր, որ ժամանակին պետութիւնից 120 հեկտար՝ այսինքն 1. 200. 000 ք.մ. տարածք էր վերցրել եւ այն մշակել ամբողջութեամբ: Քարոստ

անապատը մաքրել էր քարերից եւ հեռաւոր շրջաններից հող էր բերել՝ անշարժ քարերը ծածկելու համար, որից յետոյ այդ աղաշատ հողի մէջ ձիթապտղի տնկիներ էր տնկել: Պէտք է ասել, որ այդ հսկայական տարածքը անմշակ նոյնիսկ մի փոքրիկ մաս էլ չունէր: Սրանից 4 տարի առաջ խիստ ցրտի պատճառով ծառերի մեծ մասը չորացան, սակայն նա իր կամքի ուժով նորից սկսեց մշակել այգին: Մեր կիրակի՝ ամսի 4-ի այցը Կարապետեանին ուղղակի զարմացրել էր. նա հիացել էր կատարուած այդ հսկայական աշխատանքով, որը սկսուում էր տնկիների եւ հողերի ուսումնասիրութիւնից մինչեւ պտղի քաղելը, նրա պահեստաւորումը եւ շուկային յանձնելը: Այդ բոլորը գալիս էր մի մարդու, նրա երկու դստեր ու մի որդու անդադար աշխատանքից: Դա տքնաջան աշխատանքի, ուժի եւ խելքի համատեղութեան այգին էր:

Նախարար Կարապետեանը շատ տպաւորուեց այդ այգու կազմակերպութիւնից, եւ ցանկութիւն յայտնեց՝ ՀՀ գիւղատնտեսութեան նախարարութեան եւ «Ֆադաք» հաստատութեան կամ Իրանի «Շորայէ Ալի Ձէթուն»-ի միջեւ համագործակցութիւն ստեղծելու ուղղութեամբ: Ադ խօսքերը պրն. նախարարից լսելով, իմ ուրախութեանը չափ չկար: Ես նամակներով եւ թէ անձամբ այցելելով պրն. նախարարին միշտ յուշում էի յատկապէս Հայաստանի տաք վայրերում ձիթապտղի տնկիների մշակման կարեւորութեան մասին եւ խրախուսում Իրանից տրակտորներ գնելու: Իհարկէ այս մի այցելութեամբ բոլոր հարցերը չէին կարգաւորուելու: Այնուամենայնիւ, Իրան-Հայաստան Առեւտրի պալատը այդ հարցին ամենայն լրջութեամբ հետեւելու է, որպէսզի այս գործն իր արժանի աւարտին հասնի: Պիտի խոստովանեմ, որ պրն. Բուլանդ Նազարը շատ յար-

գանքով ու պատուով ընդունեց մեր խմբի անդամներին՝ պրն. նախարար Կարապետեանին եւ Իրանում ՀՀ դեսպան պրն. Գ. Առաքելեանին եւ արտգործ նախարարութեան պաշտօնեաներին: Նրան դուր էին եկել նախարարի տեղեկութիւնները եւ նրա հարցադրումները:

Յատկանշական է, որ Թեհրան-Ղոմի ողջ ճանապարհը ոստիկանութեան եւ անվտանգութեան ուժերի խիստ հսկողութիւն տակ էր գտնուում:

Նոյն օրը, կիրակի, Սեպտեմբերի 4-ին ժամը 3:30-ին, ըստ նախապէս կայացած պայմանաւորուածութեան, երկու նախարարները երկու տարւայ համատեղ աշխատանքի պայմանագիր ստորագրեցին, որը կը ներկայացւի ստորեւ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաշի առնելով երկու երկրների բարիդրացիական յարաբերութիւնները եւ երկկողմ

համագործակցութիւնը զարգացնելու անհրաժեշտութիւնը՝ կայացած բանակցութիւնների արդիւնքում ձեռք բերեցին հետեւեալ համաձայնութիւնները:

1. ՀՀ-ում մասնաւոր հատւածների համատեղ ներդրումներով անասնաբուծութեան բնագաւառում (խոշոր եւ մանր եղջերաւոր) իրանական սելեկցիայի Հոլշտինների եւ կաթնատու այլ ցեղերի բուծման եւ տոհմային երիւնջների աճեցմամբ զբաղող տաւարաբուծական համալիր ստեղծելու ուղղութեամբ աշխատանքների շուրջ:

2. Հայկական կողմը հետաքրքրութիւն ցուցաբերեց Իրանում հնդկահաւի եւ ջայլամի բուծման ձեռքբերումների նկատմամբ եւ ցանկութիւն յայտնեց իրանական փորձի ներդրմամբ Հայաստանում եւս զարգացնել այդ թռչունների բուծումը:

3. Հաշի առնելով ԻԻՀ

հնարաւորութիւնները ձկնաբուծութեան եւ ջրային կենդանիների բուծման բնագաւառում, ինչպէս նաեւ Հայաստանում տւեալ արդիւնաբերութեան համար բարենպաստ պայմանների առկայութեան հանգամանքը՝ հայկական կողմը հետաքրքրութիւն ցուցաբերեց Իրանից Հայաստան ակալուլտուրաներին անհրաժեշտ ձկան կերի, մանրածկան մերմուծմանը:

4. Երկու երկրներում աճեցւող պտղատեսակների փորձնական նպատակով փոխանակման եւ բոյսերի վնասատուների դէմ պայքարի կենսաբանական մեթոդների կիրառման ուղղութեամբ համատեղ հետազօտական աշխատանքների համադրում:

5. Իրանական կողմն առաջարկեց կազմել ծրագիր՝ իրանական տեխնոլոգիաներով եւ սարքաւորումներով Հայաստանում արդիւնաբերական եւ կիսաարդիւնաբերական ջերմոցային տնտեսութիւններ ստեղծելու ուղղութեամբ, հաշի առնելով հայկական կողմի հետաքրքրութիւնն այդ ոլորտի նկատմամբ: Համաձայնութիւն ձեռք բերեց համապատասխան ներկայացուցիչների մասնակցութեամբ վարել երկկողմ մասնագիտական բանակցութիւններ:

6. Քննարկել իրանական արտադրութեան տարբեր մշակաբոյսերի սերմերի, պատաստանութիւնների ձեռքբերման եւ Հայաստան ներկրման հնարաւորութեան հարցեր:

7. Ֆինանսաւորման պայմանների շուրջ համաձայնութիւն ձեռք բերելուց հետոյ կը համագործակցեն Թաւրիզի տրակտորաշինական գործարանից տրակտորներ եւ գիւղատնտեսական գործիքներ Հայաստան ներկրելու հնարաւորութեան վերաբերեալ:

8. Համատեղ գիւղատնտեսական ծրագրեր ֆինանսաւոր



րելու նպատակով ԻԻՀ կողմից միջոցներ տրամադրելու առաջարկը կուսումնասիրւի հայկական կողմից եւ արդիւնքների մասին կը տեղեկացնի իրանական կողմին:

9. Կողմերը իրենց օրէնսդրութեանը համապատասխան գիւղատնտեսական ծրագրերի համար կը նպաստեն երկու երկրների մասնաւոր հատւածի գործունէութեանը:

10. Կողմերը պատրաստականութիւն յայտնեցին գիւղատնտեսութեան բնագաւառում համագործակցել ԻԻՀ Արեւելեան Ատրպատականի նահանգի հետ:

Երեկոյեան ՀՀ դեսպանատան կողմից հանդիպում էր կազմակերպւել իրանահայ արտադրողների, արհեստաւորների, եւ այդ ոլորտներում հետաքրքրւողների հետ, որը տւեց մինչեւ ժամը 21:00-ը: Պրն. Կարապետեանը շատ տպաւորւած էր այդ մասնագէտների հանդիպումից:

Ապա նոյն երեկոյեան նւաստիս հրաւերով «Արարատ» մարզաւանի Այգեստանում կայացաւ ընթրիք, որին ներկայ էին թեմիս առաջնորդ՝ Գերշ. Ս. Սեպուհ Ս.Արք. Սարգսեանը, ՀՀ Գիւղատն-

տեսութեան նախարարը, ՀՀ դեսպան պրն.Գրիգոր Առաքելեանը եւ նրա տեղակալ պրն. Գառնիկ Բադալեանը, պրն.Սահակ Եղիազարեանը, պրն.Անդրանիկ Պետրոսեանը, ԹՀԹ Թեմական Խորհրդի ատենապետ՝ պրն. Էդւարդ Բաբախանեանը եւ Հ. Մ. Ա. Կ. Ի-ի կենտրոնական վարչութեան նախագահ՝ պրն. Համիկ Խալոյեանը: Հայ ընտանիքների միջոցով զբաղւած միւս սեղաները եւս ճոխացնում էին մեր ընթրիքի երեկոն:

Երկուշաբթի առաւօտեան ժամը 5-ին պրն. Կարապետեանը եւ դեսպան Գրիգոր Առաքելեանը, պրն. Անդրանիկ Պետրոսեանի ուղեկցութեամբ ուղեւորւեցին Թաւրիզ, որպէսզի այցելեն Թաւրիզի տրակտորաշինական գործարանը: Հարկ է նշել, որ Իրան-Հայաստան Առեւտրի պալատը մօտ երկու տարի էր, ինչ զբաղւում էր այդ գործով: Ըստ պրն. Առաքելեանի՝ հանդիպումը շատ լաւ եւ արդիւնաւետ է եղել, պատիրակութիւնը ընդունւել է բարձր մակարդակով եւ տեղի ունեցած բանակցութիւնները եւս բարեյաջող ընթացք են ունեցել:

ՎԻԿԻԼԻՔՍԻ ՆՈՐ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ



Նաիրա Հայրունեան

Հայաստանում գերադասում են չնկատել Վիկիլիքսը՝ փակելով աչքերը եւ ականջները: Հայ պաշտօնեաներն ասում են, որ Վիկիլիքսը լուրջ չէ, ընդհանրապէս պաշտօնական տեղեկութիւն չէ, այդ պատճառով էլ չարժէ արծագանքել դրան: Ընդ որում, նրանք չեն հերքում կայքի հրապարակած տեղեկութիւնները: Իսկ դրանք բաւական հետաքրքիր պատկեր են ստեղծում: Հայաստանին վերաբերող փաստաթղթերի երկրորդ մեծ խմբաքանակը առաւելագոյնս անձնաւորւած է: Եթէ նախկինում խօսուում էր Հայաստանում տիրող ընդհանուր բարքերի մասին, ապա այժմ Հայաստանի իրավիճակի ամբողջական անատոմիան է տրուում: Ընդ որում, Վիկիլիքսի գրագրութիւններով կարելի է նշել գլխաւոր ցաւոտ կէտերը:

Նախեւառաջ դա Հայաստանի յարաբերութիւններն են Ռուսաստանի ու ԱՄՆ-ի հետ: Որոշակի փաստաթղթեր հաստատում են (դեռեւս ոչ ոք չի հերքել դրանք), որ Սերժ Սարգսեանին մերձաւոր գործարար Միխայիլ Բաղդասարովն ասել է ԱՄՆ դեսպան Եովանովիչին, որ հայ-թուրքական յարաբերութիւններում Ռուսաստանն ակնյայտօրէն թուրքիայի կողմից է: Այն, որ Ղարաբաղի հաշիւին հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը ռուսական նախագիծ է, բազմաթիւ փորձագէտներ են նշել, սակայն պաշտօնական մակարդակով չի յայտարարել, որ Ռուսաստանը պրոթուրքական դիրքորոշում ու-

նի: Ընդհակառակը, Ռուսաստանի հանդէպ բազմաթիւ ռեւերանսներ են արել եւ երկարաձգել է Հայաստանում ռուսական բազայի տեղակայման ժամկէտը: Սակայն, ինչպէս պարզել է, հայկական վերնախաւն ամէն ինչ հիանալի հասկացել է, եւ այդ նախագծից փրկելու համար կոչ էր արել ԱՄՆ-ին աջակցել նախագահ Սարգսեանին:

Երկրորդ մեծ շերտը, որն ի յայտ է եկել գրագրութիւններում, Սերժ Սարգսեանի եւ Ռոբերտ Քոչարեանի միջեւ յարաբերութիւններն են:

Ինչպէս պարզել է, ամերիկեան դեսպանատան աշխատակիցները կարծում են, որ Քոչարեանը կարող է «ցանկացած պահի գործի անցնել»: Նա անգամ չի կորցրել Սերժ Սարգսեանի վրայ ճնշման լծակները: Առաւել եւս, Սարգսեանի փեսայ եւ օգնական Միքայէլ Մինասեանը նոյնիսկ գաղտնի հանդիպել է ԱՄՆ դեսպանատան աշխատակցին 2008 թ. եւ խնդրել է աջակցել Սարգսեանին: «Քոչարեանը «ուժեղ» նախագահ է, նա դեռ աշխատում է, իսկ նրա վրայ Սարգսեանի ազդեցութիւնը սահմանափակ է», ասել է Մինասեանը: Յետընտրական ձերբակալութիւններն եւ ահաբեկութիւնները նոյնպէս Քոչարեանին են վերագրել:

Երրորդ եւ ոչ պակաս կարեւոր շերտը օլիգարխների հետ յարաբերութիւններն են: Նոյն Միքայէլ Մինասեանն ասել է ԱՄՆ դեսպանատան աշխատակցին, որ Սերժ Սարգսեանը ցանկանում է յաղթահարել օլիգարխներին: «Նա ցանկանում է պարտական լինել նոր սերնդին, այլ ոչ թէ հին թալանչիներին», ասել է Մինասեանը: Ընդ

որում, նա ԱՄՆ-ին խնդրել է օգնել Սերժ Սարգսեանին այդ պայքարում:

Ըստ երեւոյթին, Սարգսեանին աջակցութիւն ցոյց է տրել: Ամէն դէպքում դեսպանատան աշխատակիցը խոստովանում է, որ իրենք անտեսում են նախընտրական կաշառքների ու ահաբեկութիւնների մասին տեղեկութիւնները եւ ցանկանում են աշխատել Սարգսեանի հետ:

Սակայն անցել է 3,5 տարի, եւ Սարգսեանը, թերեւս, չի կատարել պարտաւորութիւնները ինչպէս Ռուսաստանից մասամբ հեռաւորութիւն պահելու, այնպէս էլ Քոչարեանի գլխաւորութեամբ սեփական օլիգարխների դէմ պայքարի հարցերում: Այս բոլոր փաստաթղթերի հանրային քննարկման հանելը վկայում է, որ ժամկէտները սպառել են, եւ ժամանակն է ընտրել, թէ որ ուղղութեամբ գնալ: Կամ Սարգսեանը սկսում է իրականացնել պարտաւորութիւնները, եւ ԱՄՆ-ն աջակցում է նրան, կամ էլ ջրի երես են դուրս գալու այնպիսի փաստաթղթեր, որոնք կը հաստատեն ընտրութիւնների ու Սարգսեանի նախագահութեան լեգիտիմ չլինելը:

Առաջին ծիծեռնակը դարձաւ Սահմանադրական դատարանի անդամ Վալերի Պողոսեանի հետ սենսացիոն գրոյցի մասին տեղեկութիւնը, ով ամերիկեան դեսպանատան աշխատակիցներին խոստովանել է, որ իր վրայ ճնշում է գործադրել: Եթէ յանկարծ պարզւի, որ Սահմանադրական դատարանը ճնշման տակ է որոշում կայացրել, Սերժ Սարգսեանի լեգիտիմութիւնը մեծ հարցականի տակ կարող է դրել:

Աղբիւր՝ www.Iragir.am

Խ Օ Ս Ք Ե Ր

Խորհրդակցական Բանաժողով

Վստահ չեմ, որ ես իրապես գոյութիւն ունեմ: Ես բոլոր այն գրողներն եմ, որոնց գրութիւնները կարդացել եմ, բոլոր այն մարդիկ, որոնց հանդիպել եմ, բոլոր այն կանայք, ում սիրել եմ, բոլոր այն քաղաքները, ուր ծամբորդել եմ, բոլոր իմ նախնիներն եմ ես ... հաւանաբար կը սիրէի հայրս լինէի, որ գրուի էր, բայց չգտաւ իր գրութիւնները հրատարակելու հնարաւորութիւնը: Ոչ մի բան, ոչ մի բան, սիրելի բարեկամս, այն ինչ ցանկանում ես քեզ ասել հետեւեալն է՝ ոչ մի բանի մասին վստահ չեմ, ես ոչինչ չգիտեմ ... Երեւակայէք, նոյնիսկ չգիտեմ իմ մահուան թւականը:

Մի մեծ գիրք շարադրելը տքնաջան եւ ահաւոր արտառոց աշխատանք է: Մի գաղափար, որը բանաւոր կարելի է բացատրել մի քանի բառերով, զարգացնել եւ հասցնել 500 էջերի: Աւելի լաւ երեւի այն է, որ ձեռագրել, որ մի այդպիսի գիրք արդէն գոյութիւն ունի եւ յետոյ ներկայացնել մի ցանկ, մի մեկնաբանութիւն ... Բաւական խելքին մօտ, Բաւական ալարկոտ, ես գերադասել եմ գրել ծանօթագրութիւններ երեւակայական գրքերի համար:

10 Նոյեմբեր 1941

Մի գիրք Բաւական է քան մի կամ մի շարք բանաւոր կառույցներ: Գիրքն այն երկխօսութիւնն է, որ այն հաստատում է իր ընթերցողի հետ, այն նւագը, որ պարտադրում է իր ընթերցողի ձայնին եւ այն մնայուն պատկերները, որ թողնում է նրա յիշողութիւնում: Գիրքը ոչ թէ մի մեկուսացած գոյութիւն, այլ անհամար յարաբերութիւնների առանցքն է:

Էստ. « Բերնար Շաուի մասին »

Առաջին օրերն էին, երբ Ռեմիգտոն հրացանները գործ էին ածուում Արգենտինայում, եւ դա մի քիչ երեւակայութիւնս շոյում է, երբ մտածում եմ, որ նոյն ընկերութիւնը, որի արտադրած գործիքով ամէն առաւօտ ածիլում եմ, կրում է նոյն անունը, որով մէկը մի օր սպանել է մեծ հօրս:

Ինքնակենսագրական էստ. 1970

Ամէն անգամ, երբ մէկը մի բան է գրում իմ դէմ, ոչ միայն կիսում եմ նրա զգացմունքը, այլ մտածում եմ, որ նրա գործը շատ Բաւական կանէի ինքս: Երեւի պիտի թշնամիներիս ասեմ իրենց բովանդակութեան ցանկը նախապէս ուղարկեն ինձ, եւ կասկած չունենան, որ կը ստանան իմ հովանաւորութիւնը եւ ամէն տեսակ օգնութիւն: Նոյնիսկ երբեմն գայթակղել եմ կեղծ անունով մի կարգին անխիղճ քննադատութիւն գրել ինքս իմ դէմ:

Ինքնակենսագրական էստ. 1970

Լաւ բանաստեղծութիւնը պիտի կարդացւի բարձրաձայն: Մի լաւ բանաստեղծութիւն չի թոյլ տալիս իրեն կարդալ ցածր ձայնով կամ լուռ: Եթէ հնարաւոր լինի այն կարդալ լուռ, անպայման դա իրական բանաստեղծութիւն չէ. բանաստեղծութիւնը պահանջում է արտասանութիւն: Բանաստեղծութիւնը չի մոռանում, որ նախքան գրաւոր արեւտ դառնալը, եղել է բանաւոր արեւտ: Չի մոռանում, որ սկզբում եղել է երգ:

Դասախօսութիւն «Աստուծային Կատակերգութիւն» խորագրով, 1977

Տիւնը թատրոնից էլ Բաւական գարմանալի է, քանի որ նրանում ոչ միայն դիտում ենք ծպտեալ մարդկանց, այլ ծպտեալ մարդկանց լուսանկարներ, եւ դրանով հանդերձ, երբ այն ցուցադրուում է, հաւատում ենք դրանց:

Դասախօսութիւն «Աստուծային Կատակերգութիւն» խորագրով, 1977

Իրականութիւնն այն է, որ բանաստեղծութիւնը գրադարանում դրած գրքերում չէ: Բանաստեղծութիւնը ընթերցողի հանդիպումն է գրքի հետ, գրքի յայտնաբերումը:

Դասախօսութիւն «Բանաստեղծութիւն» խորագրով, 1977

Էսթետիկ դէպքը այնպիսի ակներեւ, անմիջական, անբնորոշելի երեւոյթ է, ինչպէս սէրը, մրգի համը, ջրի համը: Մենք բանաստեղծութիւնն զգում ենք այնպէս, ինչպէս զգում ենք կնոջ մօտիկութիւնը, կամ այնպէս ինչպէս զգում ենք մի լեռ կամ մաւահանգիստ: Եթէ մենք զգում ենք այն անմիջականօրէն, ինչու այն նոսրացնել՝ արտայայտելով բառերով, որոնք ինչ խօսք Բաւական թոյլ են քան զգացմունքները:

Դասախօսութիւն «Բանաստեղծութիւն» խորագրով, 1977

Կան մարդիկ որ դժւարանում են զգալ բանաստեղծութիւնը, եւ նրանք ընդհանրապէս այն մարդիկ են, որ բանաստեղծութիւն են դասաւանդում:

Դասախօսութիւն «Բանաստեղծութիւն» խորագրով, 1977

Մի գրող (կասէի ընդհանրապէս ամէն մարդ) պիտի մտածի, որ ամէն բան, որ


պատահում է իրեն, մի ռեսուրս է: Բոլոր բաները մեզ տրուում են ինչ-որ նպատակի համար, եւ արւեստագէտը սա պիտի զգայ աւելի ինտենսիւ կերպով: Ամէն բան, որ պատահում է մեզ, մեր նւաստացումները, մեր շփոթմունքները, մեր դժբախտութիւնները, բոլորը մեզ են տրուում որպէս հում միւթ, որպէս կաւ, որպէսզի դրանցով կարողանանք ձեւաւորել մեր արւեստը:

Մի հարցազրոյցից՝ 1981-1983

Ինձ Նոբելեան մրցանակով չպարգեւատրելը արդէն դարձել է սկանդինաւեան աւանդոյթ: Իմ ծննդեան օրւանից — Օգոստոս 24, 1899 — մինչեւ օրս, նրանք շարունակում են ինձ մերժել այդ մրցանակը:

Իհարկէ հետաքրքրւած եմ անցեալով: Մի պատճառը երեւի այն է, որ մենք անցեալը չենք կարող սարքենք, անցեալը չենք կարող փոխենք: Անցեալը, ի վերջոյ, ինչ է մի յուշ, կամ մի երազ պատմելուց բացի: Գիտես, երբ յիշում եմ անցեալս, կամ հետաքրքիր բաներ եմ կարդում, այն անընդհատ փոխւած եմ գտնում: Մտածում եմ պարտական եմ մեծ թւով գրողների: Երեւի այն գրողների, որոնց կարդացել, կամ որոնք իրենց լեզւի մի մասն են եղել, աւանդոյթի մի մասնիկը: Մի լեզու ինքը մի աւանդոյթ է:

Ինձնից հարցնում են ինչ պատգամ ունեն: Դժբախտաբար, ոչ մի պատգամ: Լաւ, սա հեքիաթն է, իսկ ո՞րն է դրա պատգամը: Զգիտեն: Ես առաջին հերթին երազող մի մարդ եմ, յետոյ՝ գրող: Իսկ ամենաերջանիկ պահերս այն ժամանակ է, երբ ընթերցող եմ:



Խորիւէ Լուիս Բորխեսը (իսպաներէն՝ Jorge Luis Borges) (Օգոստոսի 24, 1899 - Յունիսի 14, 1986) արգենտինացի գրող, ինչպէս նաեւ բանաստեղծ, քննադատ եւ թարգմանիչ է: Անցեալ դարի 20-ական թւականներին իսպանո-ամերիկեան աւանգարդիզմի հիմնադիրներից մէկն է: Նրա հեղինակութեամբ լոյս են տեսել «Արարիչ», «Գաղտնագիր», «Մէկ ուրիշը», «Բայց դարձեալ Նոյնը» բանաստեղծութիւնների ժողովածուները, նաեւ ֆանտաստիկ՝ տեսլապաշտական, հոգեբանական, արկածային, ոստիկանական ու սատիրական պատմւածքներ: Հրատարակել է պատմւածքների հաւաքածոներ, այդ թւում՝ «Յօրինւածքներ»-ը եւ «Ալեֆ»-ը:


ՀԻՏԵՐԸ՝ ՆԿԱՐԻՉ

Ադուլֆ Յիտլեր: Ո՞վ չի ճանաչում նացիստական գերմանիայի առաջնորդին, որը կրում է երկրորդ համաշխարհային պատերազմի միլիոնավոր զոհերի,

զում էր նկարիչ դառնալ: Նա նկարում է բնապատկերներ եւ ճարտարապետական կոթողներ ու շէնքեր: Նա երկու անգամ դիմում է սովորել Վիեննայի արվեստի ակադեմիայում, սակայն երկու

անգամն էլ մերժում է: Նրան առաջարկում են սովորել ճարտարապետութիւն, սակայն նա միտքալուծ է փորձում և չէր այդ մասնագիտութիւնը սովորելու: Նրա արվեստագետ դառնալու երազները այսպիսով անհնարին է դառնում իրականացնել:

Ահա նրա նկարչություններից մի քանիսը: Այսքանը բավական է հասկանալ թէ ինչպիսի ռոմանտիկ մարդ էր 20-րդ դարի ամենադաժան քաղաքական ղեկավարներից մէկը: Եւ երեւի այն, որ ռոման-



իւրեաների հրկիզման եւ ցեղասպանութեան պատասխանատուութիւնը: Մի մարդ, որի պատկերը խորհրդանշում մարդկութեան կատարած ամենաբռնի եւ վայրագ արարքները: Եւ նա արվեստագետ ու նկարիչ է եղել:

Յիտլերը իր պատանեկութեան տարիներում, 1905 թւականին, բնակւում էր Վիեննայում եւ երա-

տիկութիւնն ու անխղճութիւնը այն-
քան էլ անհամատեղելի չեն: Նա իր
ամբողջ կեանքում, մինչեւ իր ինք-
նասպանութիւնը 1945 թւականին,
մնաց արւեստասէր:




ՍՏՐԱՂԻՎԱՐԻՈՒՄ ՋՈՒԹԱԿԸ 16 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՏՈՒԺԱՍՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Երաժշտութեան աշխարհում մեծ համբաւ են վայելում Ստրադիվարի-
ուս ջութակները. դրանք 18-րդ դարում
Ստրադիվարի ընտանիքի, յատկապէս Ան-
տոնիօ Ստրադիվարիի ձեռքով արտադր-
ւած ջութակներ են, որոնք ճանաչւած են
իրենց ընտիր եւ իւրայատուկ ձայնի հա-
մար: Ահա այս ընտանիքին պատկանող,
1721 թին պատրաստուած նւագարանն է,
որ վերջերս աճուրդի է հանւել եւ վաճառ-
ւել 16 միլիոն դոլար: Ջութակը, որը կոչ-
ւում է Լէյդի Բլանթ, վաճառքի էր հան-
ւել Նիպպոն երաժշտութեան հիմ-
նադրամի կողմից. դրա վա-
ճառքից վաստակած ամբողջ
գումարը տրամադրւել է
ճապոնիայի վերջին երկ-
րաշարժից եւ ցունամիից
տուժածների օգնութեան
գործին լծւած կազմակեր-
պութիւններին:

Դասական երաժշտու-
թեան նւագարանների մաս-
նագէտներից ոմանց կար-
ծիքով, Լէյդի Բլանթը ամենա-
լաւ պահպանւած Ստրադիվա-
րիուս ջութակն է: Դա այդպէս է
կոչւում իր տէրերից մէկի, Լէյդի
Անն Բլանթի անունով, որը
բանաստեղծ Լորդ Բայ-
րոնի թոռն է եղել:




ԿԱՄՊԻՑ ԾՈՎՈՒՄ ԽՈՐՏԱԿԻԵԼՈՒ ԱՄԵՆԱԽՈՇՈՐ ՊԱՏՃԱՌԸ ՃԵՂՔՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐՆ ԵՆ



Ամէն տարի բազմահազար հայրենակիցներ ամառային հանգիստը վայելելու համար Կասպից ծովի ափամերձ շրջաններ են մեկնում, սակայն, ցաւօք, լուրերից յաճախ տեղեկանում ենք, որ նրանցից ոմանք ծովում լողալիս, այսպէս կոչւած, «թակարդում» են յայտնել, եւ սուզուելով մի ակնթարթում խեղդամահ եղել: Սա մահուան վատթարագոյն ձեւերից մէկն է եւ երկար ժամանակ դառը յիշողութիւն է դառնում յատկապէս ականատեսների ու նրանց հարազատների համար:

Թէկուզ Կասպից ծովում մահացութիւնների գլխաւոր այս



պատճառը պարզել է պատասխանատուների համար, սակայն այս ոլորտում ոչ բաւարար տեղեկութիւններ են տրուում հանրութեանը, եւ, ցաւօք, ամէն տարի ամռան թէժ եղանակին կրկնուում են անցեալ տարւայ դէպքերը: Սիրելի ընթերցողներ, այս առումով ստորեւ բերուող համառօտ տեղեկութիւնները յուսանք, որ օգտակար կը լինեն ձեզ եւ ձեր սիրելիների համար:

-Օձուկները լողալը երբեք նման չէ լողաւազանում լողալուն: Օձուկները լողալու համար տեխնիկական գիտելիքներից եւ լողալու հմտութիւնից բացի, հարկաւոր է ճանաչել նաեւ ծովի ջրի յատկանիշերը:

-Օձուկի աղի ջուրը աչքերի մէջ առաջացնում է գրգռում. դա խանգարում է լողորդի կենտրոնացումը, որով նա ի վիճակի չի լինում գտնել ծովի ափը:

-Օձուկի ջուրը շնչափողի եւ թոքերի մէջ մտնելիս, ուժեղ հազ է առաջացնում լողորդի մօտ, որով լողալը դժարանում է:

-Ալիքների հարածը խլում է լողորդի էներգիան:

-Կասպից ծովի ափամերձ շրջանի ջրի աղտոտութեան պատճառով, նոյնիսկ ակնոցներով ծովի յատակը չի երեւում: Այսպիսով դժար է որոշել ջրի խորութիւնը, եւ գտնել խեղդուող եւ կամ թակարդում ընկած մարդուն ու փրկել նրան:

-Լողալու կանոնների համա-

ծայն՝ մեծահասակների՝ 1.5մ. խորութեամբ ծովում լողալու համար ոչ միայն անհրաժեշտ է լողի հմտութիւն, այլեւ ֆիզիկական պատրաստութիւն եւ ուժ: Սակայն նոյնիսկ այս տեսակներն ունենալու դէպքում, ծովը լողալու համար անվտանգ չէ քանզի՝

-Ափամերձ ճեղքերը ծովում, լողորդների մահուան գլխաւոր պատճառներից են:

-Դէպի ափ ձգող ալիքները, մեծ ծաւալով ջուր են բերում, որը դէպի ծով դառնալով առափնեայ տարածքներում անմախադէպ ջրանցքներ է առաջանում, որոնց միջով ջուրը շատ արագութեամբ հետ է քաշուում դէպի ծով:

-Այս ճեղքերի միջից ելնող ալիքները շատ տարբեր են ծովի սովորական ալիքներից եւ ճեղքող մեծ հոսանք (Rip Current) կամ մահացու հոսանք են կոչուում:

-Այս տեսակ ջրի հոսքը աշխարհի շատ ծովերում, յատկապէս Կասպից ծովում մեծ թւով գոհեր է խլել: Այս մահացու հոսանքները վերեւից դիտելով նման է հովհարի, որի բռնակը դէպի ափ է, իսկ բացւած մասը դէպի ծով: Բռնակի ուժը շատ աւելի է: Անկախ դրանից թէ լողորդը ինչքան լող գիտի կամ ֆիզիկապէս ինչքան ուժեղ է, այդ հոսանքներից ափ հասնելը (հակառակ կողմ լողալով) անհնար է: Մի խօսքով նման ալիքը այնպիսի թափով է դէպի ծով դառնում, որին հակառակ դէպի ափ լողալը անհնար է նոյնիսկ Օլիմպիական ռեկորդակիր չեմպիոն լողորդի համար:

-Հոսանքի բացած ճեղքի լայնութիւնը 3-ից 60 մետր է լինում, իսկ դրա երկարութիւնը տարբերուում է: (Երբեմն դա միայն հէնց այն տարածքում է, որտեղ ալիքները կոտրուել ու փլուզուել են կամ սպիտակ փրփուրի են փոխուել, երբեմն էլ մինչեւ տասնեակ մետր ծովի մէջ առաջ է գնում):

ՃԵՂՔՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Այսպիսի հոսանքի ժամանակը որոշելը հասարակ մարդկանց համար դժար է: Յաճախ մարդիկ ծովում հաճելի ու հանգիստ լողալիս են եղել, երբ յանկարծակի ու անձայն ընկել են դրանցից մէկում, ընկել են ու սուզուելով խեղդուել:

Ուրեմն այս հոսանքները միայն բարձր ռիսկի տարածքներում եւ ալեկոծ ծովերում չեն պատահում: Այնուամենայնիւ ալեկոծած ծովում նման հոսանքների հաւանականութիւնը աւելի մեծ է, ուստի խորհուրդ է տրուում այդ վիճակում ծով չմտնել: Մի մոռացք մատուցել, որ որ այդ ճեղքերը կարող են առաջանալ բոլոր լճերում, ծովերում ու ովկիանոսներում:

Վերջում նշենք այս ճեղքող հոսանքների որոշ առանձնայատկութիւնները.

-Օձուկի ջուրը ճեղքի մասում ընդհանրապէս հանգիստ է եւ խաղաղ:

-Ջրի գոյնը ճեղքի մասում տարբերում է այլ մասերից:

-Դէպի հոսքի ճեղքի մասը գծի պէս ձգուում է փրփրող ջուր, մանուշակամ աղբ, որը դէպի ծով է առաջանում:

-Այն ալիքները, որ դէպի ափ են գալիս, այդ մասում կոտրուում են:

-Գիւլանի ու Մազանդերանի շատ լողափներ աւազուտ են, եւ աւազային լողափում մահիկածել նշաններ կան: Այս ճեղքերը մահիկի սուր ծայրի կողմից են առաջանում:

Թարգմանեց՝ Ա. Սինանեան

ԴԱՐՉԻՆԵԱՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արման Տ.Ստեփանեան



Անցեալ շաբաթ Հայաստանում կայացաւ բռնցքամարտի IBO վարկածով աշխարհի չեմպիոնական գօտու համար մենամարտը: Կարէն Դեմիրճեանի անւան մարզահամերգային համալիրում հանդիպեցին թեթեւ քաշային կարգում աշխարհի չեմպիոն Վիկ Դարչինեանը եւ այդ տիտղոսի պարտադիր յաւակնորդ Էվանս Մբամբան: Դա առաջին անգամն էր, ինչ հայազգի բռնցքամարտիկը իր մրցութիւնը անց էր կացնում Հայաստանում:

Դահլիճը լեւի-լեցուն էր երկրպագուներով, ովքեր մենամարտի ողջ ընթացքում չէին լռում եւ իրենց ծափերով ու բացականչութիւններով անընդհատ քաջալերում էին հայ բռնցքամարտիկին: Վախթանգը փառահեղ յաղթանակ տունէց: Նրա գրոհներից յետոյ

աֆրիկացի մարզիկը յաճախ էր յայտնուում գետնին: Արդէն իսկ առաջին ռաունդի միջնամասում մրցավարը ստիպւած էր հաշւարկ կատարել Մբամբայի համար:

«Կատաղի Ցուլը» խոստացածի պէս երկար տանջեց իր մրցակցին եւ բացայայտ առաւելութիւն ունէր բոլոր տասներկու ռաունդներում: Կողային բոլոր մրցավարները առաւելութիւնը տւեցին Վիկին՝ 119 107, 120 107, 120 107:

Իսկ հանդիպման աւարտին Դարչինեանն իր գօտին նւիրեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին, ով ներկայ էր մենամարտին Օլիմպիական կոմիտէի նախագահ Գագիկ Ծառուկեանի հետ:

Վախթանգ Դարչինեանը ծնւել 1976-ի 7 Յունւարին Վանաձորում: Պրոֆեսիոնալ բռնցքամարտիկը համարուում է նախկին ան-

վիճելի WBA, WBC եւ IBF վարկածներով աշխարհի սուպեր չեմպիոն: Դարչինեանին նաեւ 4 անգամ յաջողւել է շահել IBO-ի չեմպիոնական գօտին:

Դարչինեանի սիրող կարիերան է 158-18, որից 105-ը եղել է նոկաւտով: Այս ընթացքում նա մրցութիւններ է անց կացրել տարբեր երկրներում: 2000 թէ օլիմպիական խաղերին ներկայացրել է Հայաստանի հաւաքականը: Այդ մրցութիւնների ընթացքում նրան յաջողեց հասնել մինչեւ երրորդ փուլ, սակայն այնտեղ պարտութիւն կրեց ղազախստանցի Բուլատ Ջումադիլովից: Դարչինեանը տեղափոխւեց Աւստրալիա հէնց օլիմպիական խաղերից յետոյ եւ ի վերջոյ դարձաւ Աւստրալիայի քաղաքացի:

Սիւ 2000 թւականի Նոյեմբերի

3-ից, երբ ընդամենը 24 տարեկան էր, մուտք գործեց պրոֆեսիոնալ բռնցքամարտի աշխարհ:

Պրոֆեսիոնալ բռնցքամարտում մինչ այսօր Դարչինեանը անց է կացրել 41 մենամարտ, որի

արդիւնքում ունեցել 37 յաղթանակ 3 պարտութիւն եւ մէկ ոչ ոքի:

ՎԱՆ ՊԵՐՍԻՆ ԴԱՐՉԵԼ Է ՊՈԿԵՐԻ ՇԵՂԻՆԱԿ

Արսենալի եւ Գոլանդիայի հաւաքականի յարձակող Ռոբին վան Պերսին դարձել է ազգային թիմում առաջին խաղացողը, ում յաջողւել է դառնալ պոկերի հեղինակ՝ Եւրոպայի առաջնութեան որակաւորման փուլում: Յիշեցնենք Սեպտեմբերի 3-ին Սան Մարինոյի հետ

հանդիպմանը յարձակողը 4 գնդակ է ուղարկել մրցակցի դարպասը: Սակայն վան Պերսին չի յաջողւել գերազանցել Մարկո վան Բաստենի ռեկորդը, ով 1990թ. 5 անգամ խոցել է Մալթայի դարպասը:



ԹԱԼԱՆ ԸՆԿԵՐԱՎԱՆ ՄՐՅՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Շւէյցարական Սանկտ Գալէն քաղաքում, Սեպտեմբերի 3-ին Իսպանիայի հետ ընկերական հանդիպման ժամանակ, Զիլիի հաւաքականի ֆուտբոլիստներին թալանել են: Տուժածների թւում են Ալեքսիս Սանչեսը, Կլաուդիո Բրաւօն, Խորխէ Վալդիփան եւ Ֆաբիան Օրելիան: Յանցագործները ներխուժել են հիւրանոցի համար եւ դուրս բերել թանկարժէք իրեր: Ընկերական խաղում իսպանացիների կազմում երկու անգամ աչքի է ընկել Սեսկ Ֆաբրեգասը, մէկ անգամ՝ Ինիեստան: Ինչպէս նաեւ Ֆաբրեգասին չի յաջողւել իրականացնել 11 մետրանոցը: Զիլիացիների կազմում գոլ են խփել Մաուրիսիօ Իսլասը եւ Էդուարդօ Վարգասը:

ԱՒԱՐՏԻՅՑ ՄԱՐԱՎԱՆԱՅԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ



Բրազիլական «Մարականա» մարզադաշտը վերանորոգող աշխատողների գործադուլն աւարտւել է: Աշխատանքները համակարգող ղեկավարը համաձայնել է բարելաւել աշխատանքային պայմանները եւ տրամադրել բժշկական ապահովագրութիւն: Գործադուլը սկսւել էր Օգոստոսի 25-ից, այն բանից յետոյ, երբ աշխատողներից մէկը լուրջ վնասուածք էր ստացել շինարարութեան ժամանակ պայթիւնից:

**«Յոյս» երկշաբաթաթերթը
Վաճառում է**

«Շիրմարդ»-ի լրագրավաճառի
կրպակում
Նարմک - انتهای شیرمرد جنوبی
Հեռախոս՝ 09121836218

**«Յոյս» երկշաբաթաթերթը
Վաճառում է**

«Աշխարաշրջիկ միուսթիւն»-ում
خیابان مجیدیه - کوچه نهم - پلاک ۱
تلفن: ۲۲۵۲۶۴۵۶

**«Յոյս» երկշաբաթաթերթը
Վաճառում է**

«Փասարգադ» Գրախանութ
بهار، بعد از سه‌روردی - پلاک ۱۱۳
شهرکتاب پاسارگاد
تلفن: ۷۷۶۳۱۵۱۶

**«Յոյս» երկշաբաթաթերթը
Վաճառում է**

«Բեթիովեն» Գրախանութ
خیابان کریم خان زند - سنایی - پلاک ۲۳
تلفن ۸۸۳۱۳۸۶۸

Art system



Arthur , Alen , Alex



خدمات ماشینهای اداری

سرویس و تعمیر چاپگرهای لیزری جوهرافشان HP و سوزنی EPSON

تلفن: ۴-۸۸۳۱۵۳۴۳ و ۷-۸۸۳۲۱۴۳۶

فکس: ۸۸۸۳۳۰۰۰

آدرس: تهران، خیابان ایرانشهر جنوبی، پایین تراز خیابان سمیه،

شماره ۷، طبقه سوم، واحد ۵



ترجمه منحصر به فرد نادر پور و ه.الف. سایه از آثار

هوانس تومانیان با تصویرسازی‌های ادمان آیوازیان

دوهفته‌نامه
اجتماعی فرهنگی

هووس

شماره ۱۰۶، ۲۳ شهریور ۱۳۹۰
سال پنجم



دهمین سالگرد ۱۱ سپتامبر

صاحب امتیاز و مدیر مسؤول:
لئون آهارونیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

کارمن آذریان

لیا خاچکیان

گارون سرکیسیان

آرمینه ملیک ایسرائلیان

مدیر هنری: لیا خاچکیان

ویراستار بخش فارسی: نسیم نجفی

وب سایت: کاجیک صافاریان

ورزش: آرمان استپانیان

اشتراک: کاترین یعقوبی

نشانی: تهران، خیابان انقلاب، بین

ولی عصر و فلسطین، شماره ۱۰۴۸

تلفن: ۶۶۴۹۵۱۸۰

۶۶۴۹۲۶۹۳

تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸

نشانی وب سایت:

www.hoos.com

وب سایت فارسی:

http://farsi.hoos.com

پست الکترونیکی:

hoos@inbox.com

در این شماره

- ۲ در صفحات ارمنی این شماره
- ۴ لغو پروتکل‌های زوریخ میان ارمنستان و ترکیه
تورج خسروی
- ۵ نام خلیج فارس در یک منبع ارمنی سده هفتم میلادی
گارون سرکیسیان
- ۶ چشم‌انداز روابط تجاری ایران و ارمنستان
شاهرخ ظهیری / لئون آهارونیان / علیرضا پیروزان
- ۹ ترجمه منحصر به فرد نادرپور و ه. الف. سایه از آثار تومانیان
- ۱۲ داستان: مجله‌ای برای شش نفر
روبرت صافاریان

بخش ارمنی

- ۲ مطبوعت حق ندارند جزئیات بودجه شورای خلیفه‌گری را منتشر کنند
- ۳ فهرست اسامی اعضای شوراهای ارگان‌های جامعه آرامنه
- ۴ بررسی بودجه شورای خلیفه‌گری در جلسه ۱۶ شهریور
آرپینه سینانیان
- ۵ شما چطور، اجاره‌نشین هستید؟
ک. هاکوپیان
- ۶ مصاحبه روزنامه آژگ با کشیش نرسیس نرسیسیان

دهمین سالگرد ۱۱ سپتامبر

- ۸ ۱۱ سپتامبر: آغاز خونین هزاره سوم
- ۸ ژ. مناتساکانیان
- ۹ وقایع‌نگاری
- ۱۱ تعداد قربانیان
- ۱۲ فوروم
کولیا در هوانسیان

- ۱۴ دیدار وزیر کشاورزی ارمنستان از ایران
لئون آهارونیان
- ۱۷ ارمنستان در اسناد جدید ویکی لیکس
نائیرا هاپرومیان
- ۱۸ گزینه‌گویی
خورخه لوئیس بورخس
- ۲۰ هیتلر نقاش
- ۲۱ ویولن استرادبواربوس: ۱۶ میلیون دلار
- ۲۲ جریان‌های شکافنده
- ۲۴ ورزش
آرمان استپانیان

گوشه‌هایی از آنچه در صفحات ارمنی این شماره هویس آمده است

دومین موضوع مهمی که در اسناد ویکی‌لیکس طرح شده، روابط سرژ سرکیسیان (رئیس‌جمهور کنونی ارمنستان) و روبرت کوچاریان (رئیس‌جمهور پیشین و حامی سرکیسیان) است. میکائیل میناسیان، داماد و یکی از معاونان سرکیسیان در دیدار خود با یکی از کارکنان سفارت آمریکا در سال ۲۰۰۸ گفته است که دستگیری‌ها و فشارهای بعد از انتخابات، کار کوچاریان است و سرکیسیان نفوذ زیادی بر او ندارد. او خواهان کمک سفارت آمریکا به سرژ سرکیسیان شده است. هم او به کارکنان سفارت آمریکا گفته است که سرژ سرکیسیان قصد دارد با الیگاشی مالی کشور مبارزه کند و در این زمینه نیز خواهان حمایت آمریکا از او شده است.

در گزارش سفارت آمریکا آمده است که سفارت مایل است با سرکیسیان کار کند و از این رو اطلاعاتی را که درباره رشوه‌ها و تهدیدهای دوره پیش از انتخابات دریافت کرده است نادیده می‌گیرد. به اعتقاد نویسنده مقاله سایت لراگیر، این امر بدان معناست که یا سرکیسیان تصمیم خود را می‌گیرد و به سمت آمریکا می‌رود، یا اسناد تقلبات انتخاباتی او هم منتشر می‌شود.

جلسه مجمع نمایندگان ارمنه تهران و شمال

دو روز متوالی، ۱۵ و ۱۶ شهریور، مجمع نمایندگان ارمنه تهران و شمال کشور (پادگام‌اوورگان ژوروقو Padgamavorakan zhoghov)، که در حکم مجلس یا قوه قانون‌گذاری جامعه ارمنه است) جلسه داشت. در جلسه اول شورای خلیفه‌گری (نماکان خورهورد Temakan khorhoord)، که در حکم دولت یا قوه مجریه این جامعه است) کلیات برنامه و استراتژی خود را برای اداره امور جامعه در دو سال آینده به مجمع ارائه کرد. این برنامه مورد تأیید نمایندگان قرار گرفت. در این جلسه همچنین اسامی اعضای شوراهای گوناگونی که امور جامعه را زیر نظر شورای خلیفه‌گری می‌گردانند، از جمله شورای آموزش و پرورش و شورای قضایی، به تصویب نمایندگان رسید.

جلسه روز ۱۶ شهریور به بررسی بودجه جامعه ارمنه تهران و شمال اختصاص داشت که از سوی شورای خلیفه‌گری به مجمع ارائه شد و مورد



کرد. جرج بوش، رئیس‌جمهور جنگ‌طلب ایالات متحده، تبلیغات میلیتاریستی راه انداخت. وقایع‌نگاری لحظه به لحظه روز یازده سپتامبر ۲۰۰۱ و نوشته کوتاهی درباره انگیزه‌های هواپیماربایانی که جان خود را از دست دادند تا به هدف‌های خود برسند، بخش‌های پرونده اصلی بخش ارمنی این شماره هویس را تشکیل می‌دهند.

ویکی‌لیکس و ارمنستان

انتشار مجموعه جدید اسناد مذاکرات دیپلماتیک آمریکا با رهبران و مسؤولان کشورهای مختلف جهان شامل رشته‌ای از اسناد تازه درباره مذاکرات مسؤولان ارمنی با کارکنان سفارت آمریکا در ارمنستان هم می‌شد که اطلاعات جدیدی در بر داشتند.

